14961

373
F-41

MAR 2010

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

ԵՒ

ԱՅԴ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՔԱՂԱՔԻ ԵՒ ԳԱՒԱՌԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԵՄԱՏ

ԳՐԵՑ

ՊԵՏՐՈՍ Ե. ԲԵՖՈՒՐԵԱՆ

373
Բ-41

տրան ,,ՇԻՐԱԿ,, Ալէքսանդրապոլ
1911

01 MAR 2013

373
Ռ-41
Ա

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

ԵՒ

ԱՅԴ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՔԱՂԱՔԻ ԵՒ ԳԱՒԱՌԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԵՄԱՏ

3/912

ԳՐԵՑ

ՊԵՏՐՈՍ Ե. ԲԵԲՈՒՐԵԱՆ

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
ամբողջական առի
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՑ
13 ՆՈՅԵՄ. 1918 Թ, ԹԻՖԼԻՍ.

Տպարան ,,ՇԻՐԱԿ'' Ալէքսանդրապոլ
1911

51.258

Այն մարդը, որի չնորհիւ հիկու ցողուն է բուսնում այնտեղ, ուր առաջ մէկն էր բուսնում, աւելի է նպաստում ժողովրդի բարօրութեանը, քան թէ բոլոր քաղաքագէտներն ու փիլիսոփաները։

Ի. Սվիֆտ

I

Երբ 1906 թ. Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում տեղի ունեցան աշակերտական անհանգըստութիւններ, քաղաքային վարչութիւնը հարկաւոր համարեց մի յատուկ մասնաժողովի ձեռօք քննել և պարզել այդ աշակերտական յուզմունքների պատճառները և միջոցներ գտնել վերականգնելու և հաստատուն դրութեան մէջ դնելու դպրոցի ներքին յարաբերութիւնը։ Մասնաժողովը հանգամանքօրէն քննելով այդ հարցը, գտաւ, որ աշակերտական յուզմունքները, բացի ներքին և արտաքին յայտնի պատճառներից, առաջ են գալիս նաև այն հանգամանքից, որ այդ դպրոցի աշակերտութիւնը, շատ քիչ ժամանակ մնում է դպրոցի և դաստիարակների կրթիչ ազդեցութեան տակ, որովհետև այդ դպրոցում պարապմունքների օրերը շատ կարճ են և քիչ, որով աշակերտութեան բնաւորական կրթութիւնը և

կարգապահական ուղղութիւնը, ցանկալի չափով ենթարկուած չեն լինում դաստիարակութեան ներգործող ազդեցութեանը։

Այդ պատճառաբանութեան ընդհանուր հիմունքը այն էր, թէ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում, ամբողջ տարուայ ընթացքում պարապմունքների օրերը լինում են միջին հաշուով 143 օր և այն էլ օրական 4 ժամից պակաս, իսկ մնացած ահագին և անդին ժամանակը աշակերտութիւնը կորցնում է անգործութեան և դատարկութեան մէջ։

Այդ պարապ օրերը վատնելու և օգտակար դարձնելու համար, իմ առաջարկութեամբ և մանաժողովի միաձայն որոշմամբ ցանկալի համարուեց մըտցնել Առևտրական դպրոցում գիւղատնտեսական գիտութիւնը. նախ՝ աշակերտութեանը աշխատանքի սովորեցնելու, մատաղ սերնդի ֆիզիքական և մտաւոր ոյժերը զարգացնելու և ապա Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի կանոնադրութիւնը բարեփոխութեան ենթարկելով, նրա ներկայ ուղղութիւնը աւելի պիտանի և օգտակար դարձնելու թէ քաղաքի և թէ գաւառի ժողովրդի մեծամասնութեան համար։ Այդ նպատակով դպրոցի ուսուցչական, հոգաբարձական և ծնողական միացեալ ժողովը, նոյեմբերի 21-ի 1906 թ. միաձայն ընդունեց այդ ցանկալի որոշումը, որպէս էական անհրաժեշտութիւն և խնդրեց դպրոցի վերատեսուչ պ. Վ. Ե. Բամանովսկուն, հաւաքել հարկաւոր տեղեկութիւններ, ծրագիր կազմել և այն առաջարկել քաղաքային խորհրդին։ Բայց անցան տարիներ և դպրոցի վարչութիւնը ոչ մի դրական քայլ չկատարեց այդ ուղղութեամբ։

Մի քանի ծնողներ կամենալով նորից արծարծել այդ հարցը, 1909 թ. մարտի 6-ին մի յատուկ

խնդրագրով դիմեցին նորընտիր վերատեսուչ պ. Լևոն Սարգսեանին ընթացք տալ գործին և գիւղատնտեսական գիտութիւնների հետ միասին, խնդիր յարուցանել հաստատելու դպրոցի հոգաբարձութեանը կից նաև ծնողական խորհուրդ, որով կամենում էին որոշ չափով օգնել անգործնէութեան մատնուած հոգաբարձական մարմնին և դպրոցի վարչական գործը աւելի արդիւնաւոր ճանապարհի վրայ դնել։

Առևտրական դպրոցի վերատեսուչ պ. Լ. Սարգիսեանը քննելով այդ խնդիրը ուսուցչական ժողովում մարտի 13-ին 1909 թ. յայտնում է խնդրատուներին, թէ գիւղատնտեսական ուսմունքը Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում ցանկալի է և օգտակար և կարելի է սովորեցնել միմիայն ամառնային արձակուրդների ժամանակ և այն էլ ցանկացող աշակերտներին,– եթէ քաղաքային վարչութիւնը նիւթական միջոց տայ կազմակերպելու գործը և հրաւիրէ մասնագէտներ։ Իսկ ծնողական խորհուրդ հաստատելու համար պ. վերատեսուչը դիմել է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեանը, որից ստացած պատասխանը այն է եղել, թէ Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը լիապէս փոխարինում է ծնողական խորհրդին, ունենալով և կատարելով միևնոյն իրաւունքներն ու պարտականութիւնները։

Սակայն մեր Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը, որը կոչուած է ընդարձակ իրաւունքներով պաշտպանելու և զօրացնելու աշակերտութեան և դպրոցի շահերը. այդ պաշտօնական մարմինը անցեալ քառամեակի մէջ, ինչպէս պարզուեց քաղաքային խորհրդի 1910 թ. մարտի 16-ի նիստում, զբաղուած է եղել աւելի շատ դատարկ վիճաբանութիւններ կա-

տարելով քաղաքային վարչութեան հետ, քան թէ դպրոցի էական շահերի պաշտպանութեան նախանձախնդրութիւն ցոյց տալով և զարմանալի չէ, որ բոլորովին ուշադրութեան էլ չէ առել վերատեսչի 1910 թ. մարտի 17-ի առաջարկած հարցը, գիւղատնտեսական ուսման անհրաժեշտութեան մասին, անտարբերութեամբ անհամարհելով նոյն իսկ բազմաթիւ ծնողների խնդիրը։

Քանի որ այժմ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի կանոնադրութեան վերաքննութեան հարցը հրապարակ է դրուած, և քաղաքային խորհուրդը իր 1910 թ. մարտի 30-ի նիստում միաձայն որոշել է հիմովին վերաքննութեան ենթարկել այդ դպրոցի կրթական և տնտեսական կեանքը,—մեր կողմից ցանկալի ենք համարում նորից արծարծել գիւղատնտեսական գիտութիւնների ներմուծման հարցը Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում, յուսալով, որ այդ հարցը վերջապէս հետաքրքրութեան առարկայ պէտք է լինի թէ մեր քաղաքային վարչութեան և թէ բոլոր քաղաքի և գաւառի հասարակութեան համար։

II

Ալէքսանդրապոլում Առևտրական դպրոց հիմնելու պատմութիւնը շատ պարզ է և ծանօթ շատերին։ Մենք համառօտակի պէտք է յիշենք այդ դպրոցի բացման մի քանի հիմնական գլխաւոր պատճառները միայն, որպէսզի ընթերցողը դաղափար ունենայ Ալէքսանդրապոլում Առևտրական դպրոց հիմնելու էական շարժառիթների հետ։ Դեռ ևս 1860 թ. Ալէքսանդրապոլում մի միջնակարգ արական դպրոց ունենալու խնդիրը արծարծուում էր քաղաքիս հարուստ և ազնուական դասի մէջ և գլխաւորապէս այն պատճառով, որ այդ դասակարգը, որի ձեռքին էր նաև քաղաքի տնտեսական կառավարութեան գործը, պահանջ ունէր մի միջնակարգ դպրոցի գոյութեան, որովհետև այդ դասակարգի որդիքը ստիպուած էին շարունակաբար կրթութեան գնալ Թիֆլիս, Մոսկուա, Ս.-Պետերբուրգ և այլ տեղեր, որը աւելի նիւթական հաշուի կողմից, ներկայացնում էր մեծ անյարմարութիւն։ Իսկ Ալէքսանդրապոլի միջին կարողութեան տէր դասակարգը, այն է՝ մանր վաճառականութիւնը, արհեստաւորութիւնը և այլն, բաւականանում էին գաւառական դպրոցի և ծխական ուսումնարանների դասընթացով և այնքան էլ չէին հետաքրքրուում մի նոր միջնակարգ դպրոցի գոյութեան հարցով։ Քաղաքի հարուստ դասի ձեռքով հաւաքուած էր մօտ 18,340 ր. մի յատուկ դրամագլուխ և ցանկութիւն կար այդ դրամագլուխը շատացնելուց յետոյ, բանալ ըէալական դպրոց, բայց յաջողութիւնը տարակուսելի էր, որովհետև միջին դասակարգը գործնականապէս չէր մասնակցում նիւթերութեան գործին, համարելով ըէալական դպրոցի ուղղութիւնը ոչ այնքան ցանկալի քաղաքի ազգաբնակութեան մեծամասնութեան համար։ Եւ որովհետև հաւաքուած դրամագլուխը չէր կարելի այնքան շատացնել, որ լիապէս բաւարարութիւն տար ըէալական դպրոցի շինութեան ու պահպանութեանը, Ալէքսանդրապոլի նորընտիր քաղաքագլուխ պ. Գեղամ Տէր-Պետրոսեանը մտածում է օգուտ քաղել ժամանակաւոր դէպքից և Ս. Փրկչի եկեղեցական շէնքը, որ այդ ժամանակ դրաւած էր կառավարութեան կողմից, երկու

յարկանի դարձնելով յատկացնել ըէալական դպրոցին։

Բարեբախտաբար Երևանի Նահանգապետ պ. Կոմս Տիզենգաուզէնը աւելի հեռատես և շրջահայեաց է լինում այդ հարցի մէջ և իր կողմից ի 23-ն փետրուարի 1900 թ. հարց է տալիս քաղաքային վարչութեան, թէ ինչ վիճակի մէջ պէտք է լինեն Ս. Փրկչի դպրոցի 300-ից աւելի աշակերտները, եթէ այդ դպրոցի շէնքը յատկացւի ըէալական դպրոցին։ Քաղաքագլուխ պ. Գեղ. Տէր-Գեորգեանը առանց շրջահայեաց մտածելու, իր 26-ն փետրուարի 1900 թ. № 44 գրութեամբ պատասխանում է, թէ կարելի է իսպառ փակել Ս. Փրկչի դպրոցը և աշակերտներին տեղաւորել Ս. Նշան եկեղեցու դպրոցում կամ ընդունել նորաբաց ըէալական դպրոցը, որին համաձայն չէ լինում յարգելի պ. Նահանգապետը, չկամենալով զոհ բերել քաղաքի ստորին դասի աշակերտութեան շահը, մի քանի հարուստների ցանկութեանը։

Այնուհետև Ալէքսանդրապոլ քաղաքում մի միջնակարգ արական դպրոց բանալու խնդիրը անցնում է զանազան պաշտօնական գրագրութիւնների, մեծ ու փոքր հաշիւների և զեկուցումների մէջ։ Երևանի Նահանգապետը իր 8-ն մարտի 1900 թ. № 764 գրութեամբ վերջնականապէս անկարելի համարելով ձեռք տալ հայոց եկեղեցական կալուածների իրաւունքին, առաջարկում է քաղաքային վարչութեանը գրանել այլ և այլ ճանապարհներ, շատացնել դպրոցական գրամագլուխը և ապա այդ խնդիրը կենտրոնանում է կառավարութեան օժանդակութեան կամ քաղաքի սեփական միջոցներով դպրոցը բանալու վրայ։ Քաղաքը առաջարկում է տարեկան նպաստ տալ 7000 ռուբլի և կառուցանել կամ քրէհել դպրոցական մի

յարմար շէնք, իսկ կառավարութեան կողմից միանուագ պահանջւում է 9000 ր. դպրոցական շէնքի համար և տարեկան 14160 ր. օժանդակութեան հաստատուն երաշխաւորութիւն, իսկ քաղաքային վարչութիւնը ի նկատի ունենալով իր տնտեսական սուղ դրութիւնը, անկարելի է համարում այդ բանը և նորից դիմում է կառավարութեան՝ իր վրայ առնել ըէալական դպրոցի ծախսը, համարելով այդ կրթական գործը ընդհանուր պետական պարտաւորութիւն։

Այնուհետև կառավարութիւնը չկամենալով իր վրայ առնել Ալէքսանդրապոլում ըէալական դպրոց հիմնելու ծախսը, մտածում է այդ հարցը կապել Ղարս քաղաքում բացելիք միջնակարգ դպրոցի հետ, ապա ծրագիր է պատրաստւում շրջակայ գաւառների օժանդակութեամբ գլուխ բերել այդ գործը, որով խնդիրը աւելի ևս բարդւելով, անկարելի է դառնում ըէալական դպրոցի բացումը։

Երբ 1896 թ. ապրիլի 15-ին հրատարակւեց ռուսական նորագոյն տիպի դպրոցներ բանալու մասին եղած օրէնքները և այդպիսի դպրոցներ հետզհետէ բացւում էին զանազան տեղեր, ալէքսանդրապոլցիների մի մասն էլ, աւելի շատ վաճառական դասը, հետամուտ էր այդ տիպի դպրոցի բացման, գտնելով այդ տեսակ դպրոցը աւելի օգտակար և մատչելի տեղական ժողովրդին։ Այդ միտքը արծարծելով Ալէքսանդրապոլում հետաքրքրութեան առարկայ է դարձել նաև Թիֆլիս և այլ կենտրոնավայրեր, որտեղ որ կային ալէքսանդրապոլցի վաճառականներ, և որոնք աշխատում էին իրականացնել այդ տեսակ մի միջնակարգ դպրոց ունենալու հարցը։

Թիֆլիսի վաճառական պ. Գր. Բայենդուրեանը, որը անցեալ Ռուս-Թուրքական պատերազմի ժամա-

նակ և յետոյ էլ առևտրական ընդարձակ կապեր ուներ Ալէքսանդրապոլի հետ և ահագին օգուտներ էր ստացել,—կամենալով մի որևէ երախտագիտութիւն ցոյց տալ ալէքսանդրապոլցիներին և համակրելով առևտրական դպրոց հիմնելու մտքին, ցանկութիւն է յայտնում օգնել Ալէքսանդրապոլին տարեկան 2000 ր. նպաստով, եթէ ալէքսանդրապոլցիները ցանկութիւն ունենան բանալ միմիայն առևտրական դպրոց։

Այդ բարեմիտ նախաձեռնութեան գործը իսարկէ համակրանքով ընդունեց Ալէքսանդրապոլի կողմից և ապագայում էլ աւելի մեծ ակնկալութիւններին յոյսերով ոգևորուած, քաղաքային վարչութիւնը ձեռք առաւ մի յատուկ մասնաժողովի ձեռքով պատրաստել ծրագիր և կանոնադրութիւն, որը հաւանութիւն գտաւ նոյեմբերի 8-ին 1901 թ. քաղաքային խորհրդի կողմից և Երևանի պ. Նահանգապետի ձեռքով առաջարկուեցաւ ի հաստատութիւն։

Բարձրագոյն իշխանութեան կողմից ոչ մի արգելքի չհանդիպելով այդ տեսակ դպրոցի բացման խնդիրը, յունուարի 28-ին 1902 թ. արդէն հաստատուած էր կանոնադրութիւնը, իսկ հանդիսաւոր բացումը Ալէքսանդրապոլում տեղի ունեցաւ մեծամեծ ճառերի և անսահման ակնկալութիւնների հետ միասին, նոյն թուականի սեպտեմբերի 22-ին։

Այդպիսով Ալէքսանդրապոլի հասարակութիւնը հասաւ իր ի վաղուց հետէ ունեցած ցանկութեանը—այն է՝ ինչ գնով և ինչ ուղղութեամբ էլ որ լինի, ունենալ մի միջնակարգ արական դպրոց և ազատել իր որդիքը օտար քաղաքներից։

III

Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը 1908 թ. արդէն բոլորել է իր դասարանները. այժմ նա ունի երեք նախապատրաստական, հինգ ընդհանուր կրթական և երեք մասնագիտական դասարաններ։ Դպրոցը արդէն աւել է մի քանի դաս դպրոցաւարտներ և այդ իսկ պատճառով նրա արժանաւորութիւնը, գրական կամ բացասական կողմերը այժմ դրուած է հասարակութեան լուրջ ուշադրութեան և հետաքրքրութեան առաջ։

Բայց ցաւալի է ասել, որ Առևտրական դպրոցի վարչութիւնը մինչև այսօր էլ հարկաւորապէս ուշադրութեան չէ առել հրատարակելու այդ դպրոցի բոլոր տարեկան հաշիւները և ընդհանուր տեղեկագիրը, որպէսզի գոնէ այդ հաշիւների միջոցով հասարակութիւնը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու դպրոցի ներքին կեանքին և առաջադիմութեան հետ։ Ես հետաքրքրական ցանկութիւն ունեցայ ունենալ բոլոր տարեկան հաշիւները և այդ նպատակով գրաւոր դիմեցի պարոն վերատեսչին, բայց դժբախտաբար ստացայ միմիայն առաջի տարիների հաշիւները, այն է՝ մինչև 1907 թ. դպրոցական շրջանը։ Այդ մի քանի տարւայ հաշիւներն էլ, որոնք կազմուած են շատ անփոյթ և համառօտ կերպով, չեն տարածուել ժողովրդի մէջ և հետևապէս մնացել են առանց հետաքրքրութեան։ Տեղական մամուլն էլ, ցաւ է խոստովանել, որ իսպառ անծանօթ է մնացել Առևտրական դպրոցի ներքին կեանքին և մասաւոր առաջադիմութեան հետ, գուցէ համարելով այդպիսի քննա-

դատութիւնը և լուրջ տեսութիւնը իր նպատակից դուրս։ Մեր ձեռքի տակ եղած տարեկան հաշիւների մէջ միայն 1906—7 թուականի հաշիւն է փոքր ի շատէ լրացրած մի տեղեկատու, որը պարունակում է իր մէջ նաև համառօտ տեղեկութիւններ դպրոցի պատմական, մանկավարժական և տնտեսական հարցերի մասին, որից և քաղում ենք գործիս մէջ եղած մի քանի կարևոր թուանշաններ և այլ պաշտօնական տեղեկութիւններ, առանց քննելու իհարկէ ինքը տարեկան հաշիւը։ Անհրաժեշտօրէն ցանկալի է, որ գոնէ այժմ, դպրոցի առաջիկայ տասնամեակի առթիւ (1912 թ.) վարչութիւնը հոգս տանէր հրապարակելու դպրոցի տասնամեայ հաշիւը, որպէս լիակատար տեղեկագիր, որից հասարակութիւնը կարող լինէր հասկանալ, թէ ինչ է իսկապէս Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը, այդ դպրոցի ներքին, մտաւոր և բարոյական կեանքը, ո՞րքան պիտանի և համապատասխան է այդ դպրոցը իր կոչման և նշանակութեան կողմից, ինչ շօշափելի արդիւնք է տուել կամ կարող է տալ նա հասարակութեանը և արդարացնել ժողովրդի յոյսերը և ակնկալութիւնները։ Առ այժմ հրապարակի վրայ եղած տեղեկութիւններն ու փաստերը, ցաւ է ասել, որ այնքան էլ մխիթարական չեն։

Քաղաքիս նորընտիր իրաւասուները, մարտի 16-ի 1910 թ. նիստում լսեցին մի այնպիսի տխուր և ցաւալի զեկուցում այդ դպրոցի ներքին կեանքի և վարչութեան մասին, որից կարելի է սարսափել միայն*)... Պարզուեց, որ անցեալ քառամեակի մէջ,

*) Ցանկալի է, որ այդ զեկուցումը ամբողջապէս հրատարակի հասարակութեան խաւերի հետաքրքրութեանը դոհացում տալու համար։

քաղաքային վարչութիւնը և Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը դուրս գալով համերաշխութեան գաղափարից, զինուած են եղել միմեանց դէմ իրաւունքի յափշտակութեան, հաշուեսութիւնից խուսափելու և դպրոցական այլ և այլ միջոցների անկանոն ու անանպատակ ծախսերի մէջ կռիւ մղելու գործի մէջ, որից սասակապէս վնասուել է նոյն իսկ մանկավարժական-կրթական գործը...

Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը և վարչութիւնը մերժել են հաշիւ ներկայացնել քաղաքի վարչութեանը դպրոցի տնտեսական կեանքի մասին, ժխտել են քաղաքային խորհրդի իրաւունքը թէ դպրոցի նախահաշիւը կազմելու և թէ նրա գործունէութիւնը քննելու գործի մէջ։ Կատարել են այնպիսի միմեանց հակասող ծախսեր, որոնց գումարը քաղաքային վարչութեան հաշուով պէտք է լինի 25000 ր., իսկ դպրոցի վարչութիւնը ցոյց է տալիս 15000 ր. և բացի դրանից դպրոցական պիտոյքներ գնելու համար բաց թողած փողերը գործ են դրել ուսուցիչների ռոճիկների վրայ և այլ աւելի պակասաւոր գործեր։ Առևտրական դպրոցի ներքին «քաոսային» դրութիւնը իր ցաւալի և ծանր հեռանքներով պարզուեց առաւելապէս մարտի 20-ին տեղի ունեցած քաղաքային խորհրդի նիստում, որտեղ դպրոցի հոգաբարձութեան կողմից առաջարկուած մի քանի պահանջներ, նոր ծախսերի համար և այլ մի քանի հարցեր, իրաւասուների կողմից միաձայն մերժումի հանդիպեց և որտեղ իրաւասուները անհրաժեշտօրէն ընդունեցին Առևտրական դպրոցի կանոնադրութեան վերաքննութեան լուրջ խնդիրը։ Քաղաքային խորհրդի այդ քայլը համազօր էր անվստահութեան դէպի Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը և ու-

սուցչական կազմը, որը իհարկէ, ահագին հարուած էր դպրոցի բարոյական և տնտեսական դրութեան վերաբերմամբ։ Իսկ նախկին հոգաբարձու պ. Գ. Ստեփանեանը կամենալով պաշտպանել Առևտրական դպրոցի վարկը, հրապարակով մեղադրում է Ալէքսանդրապոլի քաղաքային վարչութեանը և գտնում է նրա կարգադրութիւնները «ճակատագրական աւերումն» այդ դպրոցի համար*)։ Բողոքում է, որ դպրոցը զրկուած է իր շէնքից և ենթակայ է քաղաքագլխի կապրիզին, և թէ քաղաքային վարչութիւնը չափազանց բարբարոս կերպով է վարուել դպրոցի և նրանում դաստիարակուող մատաղ սերնդի հետ, որով ստեղծուել է մի ճիւաղային որոգայթ և այլ աւելի անվայել խօսքեր և ակնարկութիւններ, որոնք բոլորը միասին ցոյց են տալիս, որ դպրոցի վարչական ուղղութեան մէջ, արդարև բացակայում է կարգը, արդարութիւնը և հասարակական շահի գիտակցութիւնը, որ Առևտրական դպրոցի ներքին կեանքը ինչպէս բացատրեց նախկին քաղաքագլուխ պ. Յ. Տիգրանեանը, գտնուում է իսկապէս «քաոսային» դրութեան մէջ... Այդ չափազանց տխուր փաստերը արդէն հաստատում են, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում տեղի ունեցած աշակերտական յուզմունքները առանց պատճառի չեն, հասարակութեան մէջ եղած կասկածները մի որոշ չափով ունեն իրանց հիմնաւոր պատճառները և արդէն կուտակուել են այնպիսի տնտեսական-բարոյական խնդիրներ, որոնք դուցէ մօտիկ ապագայում հանդիսանան հոգոր արգելքներ դպրոցի խաղաղ առաջադիմութեան, և դուցէ նոյն իսկ նրա գոյութեան համար։

Թէև 1908 թուականից արդէն բարձրացել է Ա-

*) «Սուրհանդակ» № 13, 1910 թ.

լէքսանդրապոլի Առևտրական դպրոցի կանոնադրութեան վերաքննութեան հարցը և այդ դպրոցի տնտեսական-կրթական և վարչական մասերի ուղղութեան խնդիրը, սակայն մինչև այսօր էլ մնացել է միմիայն լոկ որոշումներ։ Մեծապէս յոյս ունենք, որ մարտի 16-ի քաղաքային խորհրդի միաձայն որոշումը պէտք է անհրաժեշտօրէն ընթացք տայ և շտապեցնէ այդ ցանկալի գործը, առ այժմ մեզ համար վերին աստիճանի ցանկալի է, որ դպրոցի կանոնադրութեան վերաքննութեան ժամանակ ի նկատի առնուած լինի, որ—

Ա. Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը լինի իսկապէս քաղաքային կրթական հաստատութիւն.

Բ. Որ դպրոցի ընդհանուր կրթական վիճակը և ուղղութիւնը աւելի օգտակար և մատչելի դառնայ քաղաքի և գաւառի մեծամասնութեան համար։

Գ. Որ Առևտրական դպրոցը անհրաժեշտօրէն վերածուի գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի կամ այդ դպրոցում ներմուծուի գիւղատնտեսական գիտութիւնները, տեղային պայմանների համեմատ։

Դ. Որ Առևտրական դպրոցի ուսուցիչների ռոճիկները և ուսման վճարը ենթարկուած լինի քաղաքային խորհրդի և հոգաբարձութեան որոշմանը և արդարակշիռ ժողովրդի վճարողական կարողութեանը։

Ե. Որ հարկաւորապէս սահման դրուէր ուսուցիչների անհաշիւ բացակայութիւններին, ենթարկելով այդ գործը քաղաքային խորհրդի կամ ծնողական մարմնի հսկողութեանը։

Զ. Որ օրինական ճանապարհով արգելք դրուէր հարուստ ուսուցիչների որդոցը և այլ քաղաքացիներին օգտուելու ձրիավարժութեան իրաւունքից։

Ահա այդ մի քանի յոյժ կարևոր հարցերն են,

որ մեր կարծիքով պէտք է լուրջ խորհրդածութեան առարկայ դառնան դպրոցի կանոնադրութիւնը և ծրագիրը վերաքննող մասնաժողովի կողմից, որովհետև հաստատ համոզուած ենք, որ այդ հարցերի լուսաբանութեամբ և ի կատար իրագործութեան մէջ միայն կարելի է տեսնել մեր Առևտրական դպրոցի յարատև ներքին խաղաղութիւնը։ Միւս կողմից ցանկալի է, որ մեր քաղաքային գործերի ղեկավարները և հասարակական գործիչները ի նկատի ունենան այն միջավայրի և շրջանի տնտեսական դրութիւնը, որտեղ հաստատուած է մեր Առևտրական դպրոցը, որովհետև անվիճելի է, որ դպրոցը, որպէս քաղաքային կրթական հաստատութիւն, կարող է գոյութիւն ունենալ միմիայն տեղային ժողովրդի բարոյական և նիւթական զոհաբերութիւնից, այդ իսկ պատճառով մեր կողմից աւելորդ չենք համարում նախքան Առևտրական դպրոցի ներքին կեանքի մասին խօսելը,— մի քանի խօսքով բացատրել Ալէքսանդրապոլ քաղաքի և գաւառի ներկայ տնտեսական վիճակը, որի լուսաբանութիւնը ինքնըստինքեան կարող է առաջ բերել և լուծել նաև այն հարցը, թէ մեր քաղաքը և գաւառը ինչպիսի միջնակարգ դպրոցի պէտք ունի և թէ ինչ բարեփոխութիւն կարելի է մտցնել մեր Առևտրական դպրոցում, որպէսզի այդ մեր դաւառի միակ միջնակարգ դպրոցը կարող լինի ծառայել ժողովրդի մեծամասնութեան և դաւառի էական շահերին։

IV

Մինչև վերջին Ռուս-Թուրքական պատերազմը (1878 թ.) Ալէքսանդրապոլ քաղաքի և գաւառի տնտեսական դրութիւնը, պէտք է խոստովանել, որ գտնուում էր բաւարար դրութեան մէջ։ Գաւառի նորադարձ ժողովուրդը (1830 թ.), որը բաղկացած էր գլխաւորապէս երկրագործ և անասնապահ դասից, տիրում էր բաւականաչափ ընդարձակ և ուժեղ հողաբաժինների։ Երկրագործութիւնը թէև նահապետական դրութեան մէջ, բայց միացած անասնաբուծութեան հետ, լիակատար կերպով ապահովում էր աշխատասէր, խնայող և սակաւապէտ ժողովրդի տնտեսական կեանքը։ Գիւղական ընտանիքը առողջ և ամուր ամբողջութեան մէջ, իր ձեռքի աշխատանքով ձեռք էր բերում բոլոր կենսական միջոցները, շատ քիչ կարիք ունենալով պատրաստի առ ձեռն դրամի հետ։ Շռայլութիւնը և զեղխութիւնը շատ քիչ էր տարածուած գիւղերում։

Ալէքսանդրապոլի գաւառը, պատմական Շիրակի մի մասը, իր լիք ամբարներից շարունակ արտահանում էր դէպի շրջակայ գաւառները և Կովկասի զանազան տեղեր հացաբոյսերի ահագին պաշար։ Ձեռք բերած դրամի շնորհիւ Ալէքսանդրապոլի վաճառականութիւնը և արհեստը կենդանութեան մէջ էր և տնտեսական առաջադիմութեան հետ շէնացնում էին նաև նորաշէն քաղաքը։ Պետական և տեղական հարկերի չափը դեռ [illegible] ծանր չէր, բնութեան պատահարները՝ երաշտութիւնը, ցրտահարութիւնը և այլ անյաջող պատահարները չէին կարող խոպան ընկճել աշխատասէր գասի տնտեսական կեանքը, ո-

1001
3/91

բովհետև հողի պտղաբերութիւնը աւելի շատ էր, քան սպառման քանակութիւնը։ Աղքատութիւնը իր սպանիչ և մաշող հետևանքներով անծանօթ էր գաւառին. երկրի տնտեսական կեանքը առաջադիմութեան մէջ էր, կապուած շրջակայ գաւառների տուր և առի հետ։

Այդպիսի տնտեսական և քաղաքական ապահովութեան պատճառով, Ալէքսանդրապոլը շարունակ ինքն էր քաշում շրջակայ գաւառներից, Պարսկաստանից և Թուրքիայից նորանոր գաղթականների ահագին խմբեր, որոնք բազմացնում էին թէ տեղային ազգաբնակչութիւնը և թէ պատճառ էին դառնում քաղաքի ու գաւառի տնտեսական բարգաւաճմանը։ Եւ Ալէքսանդրապոլ քաղաքը կենտրոնացնելով իր մէջ գաւառի տնտեսական ոյժը, հետզհետէ առաջադիմում էր թէ վաճառաշահութեան և թէ արհեստների արտահանութեան մէջ, ապահով տնտեսութեան հոչակ ունենալով, ոչ միայն Անդրկովկասի, այլ և Ռուսաստանի և դրացի օտար երկրների մէջ։ Պետական տնտեսական ձեռնարկութիւնները, բերդերի, ամրոցների և զօրանոցների կառուցման գործը, միացած քաղաքի շինարարական գործի հետ, տալիս էին ահագին աշխատանք թէ քաղաքին և թէ գաւառին։

Մանաւորապէս յաջող դրութեան մէջ էր քաղաքի արհեստաւորութիւնը, որը բացի գաւառի պէտքից իր արհեստի արտադրութիւնը տարածում էր դէպի շրջակայ գաւառները և ազատ էր գործարանական մրցութիւնից։ Տեղական արհեստաւորութեան վիճակը դրած էր լուրջ հիմունքների վրայ (անտաւ), որը իր կողմից շէնացնում էր տեղային առևտրական շուկան։ Տնտեսական այդ բարեյաջող դրութեանը վկայ են Ալէքսանդրապոլ քաղաքի և գաւառի շուտա-

փոյթ մեծանալը ամենակարճ ժամանակի մէջ, մեծածախս հասարակական-կրթական շէնքերի առաջ գալը, որն ամենայն իրաւամբ առաջնակարգ տեղ էր բռնել Անդրկովկասի ճնացած աւելի հնագոյն գաւառաքաղաքների մէջ։ Եւ Ալէքսանդրապոլի գաւառը կարող էր պարծենալ իր բազմաթիւ հարուստ ընտանիքների թուով, գործունեայ ու ընդարձակ վաճառականների ու արհեստաւորների շատութեամբ, որը ըստ ամենայնի, օրինակելի և նախանձելի էր շրջակայ գաւառների համար։

Բայց դժբախտաբար այդ տնտեսական բարեյաջող դրութիւնը երկար ժամանակ տևողութիւն չկարողացաւ ունենալ և այն, ինչպէս պէտք է պարզենք, աւելի բնական և քաղաքական հզօրագոյն պատճառների շնորհիւ, որին չէր կարող դիմադրել նորագաղթ ժողովուրդը, որը լինելով զանազան երկրների գաղթականութեան արդիւնք, դեռ ևս չէր ձուլուել և հասունացել մի որոշ քաղաքացիական տնտեսութեան մէջ։

V

Մինչև 1880 թ. այն է՝ մօտ յիսուն տարուայ ընթացքում, Ալէքսանդրապոլ քաղաքի և գաւառի ժողովուրդը արդէն կրկնապատկուել էր, իսկ հողի տարածութիւնը ճնացել էր նոյնը։ Երկրի ընդհանուր տնտեսական կեանքը մտել էր մի նոր, աւելի ծանր պայմանների ազդեցութեան ներքոյ։

Գաւառի արդիւնաբերութիւնը և սպառումը մրցում էին միմեանց դէմ և յաղթութիւնը թեքւում էր դէպի անապահովութեան կողմը։

Վերջին Ռուս-Թուրքական պատերազմը, որպէս քաղաքական և տնտեսական սոսկալի փոթորիկ, եկաւ հիմնովին քանդելու գաւառի տնտեսական դրութիւնը։ Պատերազմի կարճ, խաբուսիկ, ժամանակաւոր և անհաստատ յաջողութիւնը, թէև մի առժամանակ ծածկեց տնտեսական-հասարակական խոցերը, բայց արտակարգ ցնցումներով, հիմնովին փոխեց ժողովրդի ապրելու եղանակը և պատճառներ ստեղծեց ոգէտ և անհեռատես ժողովրդին անգիտակցաբար ընտելու շռայլութեան և վատնումի սիստեմը։ Այդ ժամանակից սկսած հետզհետէ եռապատիկ բարձրացան կենսական պիտոյքների գները, հարկերի, քրէհների և այլ ծախսերի չափը և դժբախտաբար մնացին անփոփոխ։

Իսկ երբ պատերազմական գործողութիւնների վերջաւորութեան հետ հետևապէս պակասեց մուտքերի աղբիւրները, երբ անցաւ տնտեսական խելացարութեան շրջանը և կեանքը մտաւ իր բնական տնտեսական ընթացքի մէջ, դառն իրականութիւնը միայն այդ ժամանակ բացեց գաւառի հասարակական և տնտեսական վէրքերը, որի մեծութիւնը և խորութիւնը արդարև զարհուրելի է իր կործանիչ հետևանքով... Եւ իսկապէս ինչ է ներկայացնում այժմ Ալէքսանդրապօլի և գաւառի տնտեսական վիճակը, որը մի առժամանակ ուժեղ կերպով բարձրացել էր տնտեսական ապահովութեան մէջ և բնականապէս հանդիպելով աննպաստ պայմանների ընկել է։ Եւ ահա մօտ երեսուն տարի է, որ շարունակ ընթանում է դէպի տնտեսական աւերումն։ Այդ հարցը տնտեսական մի լուրջ խորհրդածութեան խնդիր է, որը երբէք չէ կարելի անտես առնել, երբ մենք կամենում ենք խորհրդածութիւն անել գաւառի տնտեսական-կրթական ընդհանուր հարցերի վրայ։ երբ մենք կամենում

ենք ապահովութեան մէջ տեսնել մեր գաւառի միակ միջնակարգ դպրոցի ապագայ վիճակը։

Ալէքսանդրապօլի գաւառը այժմ դրուած է տընտեսական անխուսափելի կործանման առաջ։ Ազգաբնակչութիւնը ութսունամեայ ընթացքի մէջ արդէն եռապատկուել է, իսկ հողային չափը և մշակումը մընացել է միևնոյնը։ Վերջնագոյն տեղեկութիւնների և վիճակագրութիւնների հիման վրայ*) գաւառը ունի 19793 ծուխ, 174690 հոգի ազգաբնակչութեամբ, իսկ քաղաքը հետը մօտ 200,000 հոգի ժողովուրդ։ Գաւառի գիւղացիութեան հողատիրութիւնը համայնական է, որ արդելք է հանդիսանում տնտեսական նախաձեռնութեան գործին։ Չափազանց քիչ հողաբաժինը անկարելի են դարձնում ընդարձակելու արդիւնաբերական ոյժերը։ Գիւղական ամեն մի ընտանիք հազիւ է տիրում 12,28 ամեն տեսակ հողաբաժինի, որից դուրս գալած լեռնային բարձրավանդակ տեղերը, սարերը, ձորերը և քարքարոտ բաժինները, որոնք բոլորովին անպէտք են երկրագործութեան համար, մնում է պիտանի հողաբաժիններ ամեն մի ընտանիքին 6,31 դեսեատին կամ մի հոգուն, արական և իգական 0,71 դեսեատին տեղ։ Այդպիսի չափազանց քիչ և աղքատ հողաբաժինն էլ անդադար հերկելուց յետոյ արդէն ուժասպառ է դառել. հողի միջին պտղաբերութիւնը հազիւ թէ վարձատրում է մշակ դասի լոկ աշխատութիւնը։ Գաւառի ջրազուրկ վիճակը, արհեստական ոռոգման բացակայութիւնը, յաճախակի տեղի ունեցող երաշտներն ու ցրտահարութիւնները, հողի մշակման նախնական եղանակը, հացահատիկների անփոփոխ տեսակները և արհեստա-

*) Б. С. Версаладзе—Краткій обзоръ Александропольскаго податн. участка, Александрополь, 1910 г.

կան պարարտացման չգոյութիւնը իսպառ անօգուտ են դարձնում երկրագործական աշխատութիւնը, որը ենթակայ է նաև անադին և սոսկալի հարկերի ծանրութեան ներքոյ։ Գաւառի բոլոր պետական և հողային հարկերն են 277108 ր., որ ամեն մի ընտանիքին ընկնում է բաժին 14 բուբլի։ Այդ թիւը դուցէ քիչ երևայ ընթերցողի համար, բայց ի նկատի առած աշխատանքի բացակայութիւնը և տեղային ժողովրդի աղքատութեան չափը պէտք է ամենածանր և բարձր համարել։

Երկրագործութեան այդ անյաջող դրութեան հետ կապած է անշուշտ անասնապահութեան ամենախեղճ վիճակը։ Ամբողջ գաւառի մէջ հաշւում է 136000 եղջիւրաւոր կենդանիներ ամեն տեսակից, և մօտ 200,000 մանր կենդանիներ. այդ թիւը բաժանած ընտանիքի վրայ, գալիս է 7 եղջիւրաւոր և 10 մանր կենդանիներ։ Բայց խնդիրը քանակութեան մասին չէ, այլ յատկութեան և պիտանաւորութեան տեսակէտից է։ Ալէքսանդրապոլի անասունների տեսակները և ցեղը ամենախեղճ տեսակից են, որոնք յայտնի են իրանց մանրութեան, անուժութեան և էժանութեան կողմից։ Ուտեստքի և անասնաբուծութեան խղճալի վիճակը դարձրել է անասունների ցեղը ամենատոր տեսակը։ Աղքատ գիւղացիութիւնը հնարաւորութիւն չունի ապնուացնել անասունների ցեղը և հանդստութեան ու պարարտութեան մէջ բարձրացնել նրա արժէքը։ Անասնապահութեան բացակայութեան և այդ խղճալի դրութեան պատճառով բացակայում է նաև կաթնատնտեսութիւնը, որը հազիւ հազ բաւականութիւն է տալիս տեղային աղքատ պահանջին և արտահանութիւն չունի։ Այդպիսի խղճալի դրութեան մէջ է թռչնապահութիւնը, մեղաբուծութիւնը և այլ գիւղատնտեսական ճիւղեր։ Գաւառում գործարանական արդիւնաբերական և տնայնագործութեան բացակայութիւնը ստիպում է գիւղացիութեանը տարեայ երկու երրորդական մասը վատնել անգործութեան և ծուլութեան մէջ։ Երկաթուղին խլեց գաւառի գիւղացիութեան աշխատանքից ոչ միայն քաղաքի և շրջակայ գաւառների համար ծանրութիւններ տեղափոխելու աշխատանքը, այլև Կողբի աղահանքի տարեկան մօտ 2 միլիոն փութ աղի արտահանութեան գործը։ Անգործութեան մատնուած գիւղացիութիւնը աղքատ մնունդի, վատ ապրուստի պատճառով ենթակայ է զանազան հիւանդութիւնների։ Համաճարակ մահացումները քանդում են ժողովրդի առողջութիւնը և աճեցողութեան կարողութիւնը, որի դէմ կուելու համար խեղճ ժողովուրդը խաւար է և անզօր։ Ամբողջ գաւառում կան 32 դպրոցներ միայն գիւղական դասի համար, որտեղ սովորում են 2,520 հոգի երկու սեռից. գաւառի մէջ բոլոր գրագէտների թիւն է 12804 հոգի։ Ահա թէ որպիսի խաւարի մէջ է հեծում գաւառը, որի տգիտութեան շնորհիւ հանդէս են եկել հարիւրաւոր տրուկներ և կեղծ փաստաբաններ, որոնք շարունակ սեղծում են կռիւներ, հաստատում են ժողովրդի մէջ ստոր հակումներ դէպի կռիւ, դէպի չարագործութիւն և լցնում են աղքատ ժողովրդին դատարանների դռները...

Եւ Ալէքսանդրապոլի գաւառը, որը սրանից քառասուն տարի առաջ հեշտութեամբ կերակրում էր բացի իր հարազատներից նաև շրջակայ գաւառները, այժմ այդ երբեմնի հացաշատ Շիրակ գաւառը սովալլուկ դրութեան մէջ, սարսափելի զրկանքներով առնում է Ռուսաստանից բերուած ստոր տեսակի

ալիւրը և հետը գարի ու կարտոֆիլ խառնելով հաց է պատրաստում իրեն համար... Ինչու։ Որովհետև Շիրակի ամբարները այժմ դատարկ են, գոմերը պարապ, տները ու մարագները կիսաւեր դրութեան մէջ։ Այժմ Ալէքսանդրապոլի գաւառի գիւղացուն կարելի է իսկոյն ճանաչել սօղդատի հին շինելի մէջ փաթաթուած, հազարաւոր կարիքաններով մէջ պարուրած իր մերկութիւնը, կեղտի ու անմաքրութեան մէջ...

Գաւառիս գիւղացիութիւնը, որը հազարաւոր խնդրագրերով շատ անգամ դիմել է կառավարութեանը հողաբաժիններ ստանալու կամ տեղափոխուելու ուրիշ հողաշատ գաւառներ և միշտ մերժում ստացել. այդ գիւղացիութիւնը այժմ չունենալով առաջնորդներ եղած տնտեսութիւնը բարելաւելու և քիչ հողից էլ բաւական տնտնդ ստանալու համար ստիպուած է բռնել պանդխտութեան և գաղթականութեան կործանիչ ճանապարհը. այժմ Ալէքսանդրապոլի գաւառացիները լցուած են ոչ թէ միայն Կովկասի և Ռուսաստանի բոլոր քաղաքները, հանքերն ու գործարանները և չարաչար աշխատանքի մէջ են, այլ և մի անհագին բազմութիւն էլ արդէն անցել են ցամաքներն ու ծովերը և հեռու, Ամերիկայի մէջ տարուստ են որոնում... Ահա այդ է մեր գաւառի տնտեսական դրութեան համառօտ պատկերը, որը հաստատուած է բազմաթիւ պաշտօնական ուսումնասիրութիւններով*), լուսաբանուած է զանազան լրագրական տեղեկութիւններով և թղթակցութիւններով և որը չտեսնելու կամ ծածկելու համար պէտք է լինել կամկոյր կամ կեղծող...

*) Տես Экономическое положеніе Государств. крестян. Закавказск. края—С. Зелинскій, Тиф. 1886 г.

Խօսք չկայ, որ գաւառի տնտեսական այդ սոսկալի դրութիւնը պէտք է հզօրապէս ներգործէ գաւառաքաղաքի տնտեսական կարողութեան վրայ, որովհետև անվիճելի է, որ գաւառը միայն կարող է սնուցանել քաղաքը, գաւառի բարեկեցութիւնը միայն կարող է բարձրացնել քաղաքի տուր և առը, արհեստի բարգաւաճումը և հետևապէս ընդհանուր գաւառի տնտեսական ապահովութիւնը։

VI

Ալէքսանդրապոլ գաւառի տնտեսական անյաջողութիւնը, ինչպէս նկատեցինք, հզօրապէս ներգործեց նաև քաղաքի տնտեսական դրութեան վրայ, որի աւերիչ ազդեցութիւնը հետզհետէ և շարունակաբար զգալի է դառնում քաղաքի տուր և առի, արհեստի և արդիւնաբերութեան վրայ։

Ցիշենք նախ, որ վերջին պատերազմից անմիջապէս յետոյ, Ալէքսանդրապոլի վաճառականութեան համարեա կէսը ստիպուած եղաւ տեղափոխուելու Ղարսի նահանգի զանազան կողմերը և կիսեց Ալէքսանդրապոլի դրամագլուխը տեղային առևտրի և արդիւնաբերութեան մէջ։ Ղարսի նահանգում հաստատուած Ալէքսանդրապոլցի վաճառականները բնականապէս մրցակից հանդիսացան ընդիկ քաղաքի հետ և նպաստաւոր դրութիւնից օգուտ քաղելով, կարեցին այդ նահանգի տուր և առը Ալէքսանդրապոլի հետ։ Պատերազմից յետոյ Ալէքսանդրապոլի բերդը կորցրեց իր նշանակութիւնը. կառավարութեան ահագին ծախսերը շինութիւնների վրայ, անցաւ Ղարս քաղաքը։

Երկաթուղիի բացումը, որը ճանապարհագուրկ

և հողաշատ գաւառների համար հանդիսանում է տնտեսական բարիք, մեր գաւառի և քաղաքի համար հակառակ արդիւնք առաջացրեց, որովհետև խպառ կտրեց գիւղացիների աշխատանքը ապրանքներ տեղափոխելու գործի մէջ թէ մեր գաւառի և թէ դրացի գաւառների հետ. այժմ երկաթուղին ինքն է քամում գիւղացիների աշխատանքը։ Երկաթուղին հեշտութիւն տուեց, որ Ռուսաստանի շրջիկ վաճառականները և գործարանատէրերը լցրին իրանց գործարանական արդիւնաբերութիւնները թէ քաղաքի և թէ գաւառի բոլոր գիւղերը և չափազանց շատացնելով գիւղական խանութպանների թիւը, քամեցին գաւառի առձեռն դրամը։ Երկաթուղին հեշտութիւն տուեց տեղական զօրաց բոլոր մասերին անմիջապէս ստանալ բոլոր պիտոյքները Ռուսաստանի գործարաններից, որով հզօրապէս վնասում է տեղական առևտուրը։ Երկաթուղին խպառ կտրեց Ալէքսանդրապոլի առևտուրը նաև դրացի գաւառների հետ. այժմ երկաթուղու գծի մօտ եղած բոլոր գաւառները և գիւղերը հեշտութիւն ստացան ապրանքներ և այլ հարկաւորութիւններ ստանալ անմիջապէս դրսից և հեռու գործարաններից, առանց Ալէքսանդրապոլի միջնորդական աշխատանքի։ Եւ Ալէքսանդրապոլ քաղաքը, որը սխալ դասաւորութեամբ համարւում է երրորդ կարգի հարկաւորութեան ենթակայ մի քաղաք, այժմ կտրած ամեն կողմից, կզգիացած տնտեսական գրութեամբ, դրած է տնտեսական անել դրութեան մէջ։ Տեղական առևտուրը համեմատած սրանից քսան տարի առաջ եղած գործի հետ, պակասել է երեք անգամ, իսկ եղած արդիւնքը սոսկալի մրցութեան շնորհիւ, իջել է կիսով չափ, որով առևտրական ձեռնարկութիւնները այլևս շահ չեն բերում։ Արդէն քիչ

թէ շատ նշանաւոր առևտրական տներ, կարճելով իրանց առևտուրը քաղաքումս, տեղափոխում են իրանց գործունէութիւնը այլ և այլ տեղեր։ Իսկ շատ շատերը բոլորովին թողնում են Ալէքսանդրապոլը, որը հետզհետէ դատարկւում է գործունեայ վաճառական դասից։ Գարապութիւնը և անգործութիւնը այն աստիճան ճնշում են տեղային առևտրական ձեռնարկութիւնները, որ ընթացիկ գործերի համար վաճառականութիւնը վճարում է ամենաբարձր տոկոս առձեռն դրամի համար։ Բանկային գործունէութիւնը արդէն ցոյց է տալիս մուրհակների ժամանակամիջոցի երկարացումի անհրաժեշտութեամբ, շատ քիչ գործ ունենալով առձեռն դրամի հետ։ Մնանկութիւնը և մուրհակների բողոքումը արդէն սովորական է դարձել։ Այդպիսի տնտեսական խղճալի դրութիւն ունեցող Ալէքսանդրապոլ քաղաքը այժմ ներկայացնում է որպէս մի չորացող ծառ, կանգնած անմնուղ հողի վրայ։ Տեղային վաճառականութիւնը իսկապէս չարչիութիւնից դէն չի կարող անցնել, առանց գործարանական և արդիւնաբերական միջոցների, չունենալով ոչ մի արտահանութեան նիւթ, ճնշած անագին հարկերի, քրէհների և տոկոսների տակ, չի կարող ապրանք վաճառել սնանկ գաւառի մէջ։ Բնական է, որ տեղային վաճառականութիւնը հետզհետէ մաշելով, բարկանալով, ի վերջոյ պէտք է ակամայից դիմէ ոչ ցանկալի վախճանի. իսկ քաղաքի տնտեսութիւնը առաւելապէս սոսկալի է։

Ինչպէս յայտնի եղաւ մեր նոր քաղաքագլուխ պ. Գ. Կամսարականի պաշտօնական ճառից դեկտ. 21-ի 1910 թ., մեր քաղաքի պարտքերը առ 1-ն յունուարի 1911 թ. աճել են մինչև 226,838 ր., որը անդուլ-անդադար և հրէշաւոր տոկոսով, այն է՝ տա-

ռեկան 20,000 ռ. մեծանում է շարունակ։ Քաղաքային վարչութիւնը առանց քաղաքային խորհրդի գիտութեան և թոյլատուութեան արդէն ծախսել է մօտ 75,231 ռ. իր անձեռնմխելի և յատուկ գումարներից։ Քաղաքը չի կարող այլևս կանոնաւոր ոռճիկ տալ իր ծառայողներին և յուսահատ կերպով ձեռք է առել քաղաքացիներին հարստահարելու գործը, այն է՝ եղած հարկերը և մուտքերը սոսկալի կերպով բարձրացնելով և բռնութեամբ հաւաքելով*)։ Նախկին քաղաքագլուխ պ. Տիգրանեանի առաջարկած 42000 ռ. փոխառութիւնը, ինչպէս նաև մի այլ մեծ փոխառութեան ծրագիր մօտ 812000 ռ. գումարով, սոսկալի ընդդիմութեան հանդիպեց քաղաքային իրաւասուների կողմից, որոնք չհասկանալով այսքան կարճ ժամանակի մէջ քաղաքը պարտքերի տակ ընկնելու զաղտնիքը և յոյս չունենալով ոչ մի նոր աղբիւր գտնելու, վճռեցին վերաքննութեան ենթարկել քաղաքի բոլոր տնտեսութիւնը և գործերը։ Քաղաքացիների վերջին ծայր աղքատութեան մի պարզ օրինակն էլ այն է, որ 1904 թ. մինչև այսօր քաղաքացիների վրայ ապառիկներ է մնում 90,000 բուբլի մի կլորիկ գումար, որը հաւաքելու համար պէտք է ոտքի հանել բոլոր սանդարապետական դասը։

Ահա այդպիսի մի գաւառի և քաղաքի մէջ է հաստատուած Ալէքսանդրապոլի Առևտրական Մեծանուն դպրոցը, որը իր մեծադղորդ անունով և նպատակով կարող է միայն զարմանք պատճառել օտար քաղաքացիներին։

Կարծում ենք, ինչպէս որ անբնական է Ալէքսանդրապոլի պէս ջրազուրկ գաւառում բանալ նա-

*) Տես XIII գլուխը, որպէս մանրամասն բացատրութիւն։

ւակերպութեան դպրոց, այնպէս էլ անխորհուրդ է ունենալ մասնագիտական առևտրական դպրոց, մի այնպիսի գաւառաքաղաքում, որն ամեն կողմից անյարմար է վաճառաշահ կենտրոնավայր լինելուց։ Առևտրական դպրոցների գոյութիւնը Թիֆլիսի, Բագուի, Մոսկուայի, Օդեսսայի և Վարշաւայի նման քաղաքների համար արդարև մի ցանկալի անհրաժեշտութիւն է, մի էական պահանջ այնտեղի բազմաթիւ հարուստ առևտրական դասի համար, որոնց գործունէութիւնը, տուր և առը կապուած է ամբողջ Ռուսաստանի և արտասահմանի հսկայական դրամագլուխների հետ։

Իսկ ներկայ Ալէքսանդրապոլը համեմատել այդ քաղաքների հետ, կարծում ենք, որ ամենաքիչը պարզամտութիւն կարելի է համարել։ Ուրեմն ինչով բացատրել այն հիմնական պատճառը, որ ալէքսանդրապոլցիները ցանկութիւն են ունեցել բանալ մի Առևտրական դպրոց, որը անհարազատ է տեղային պայմաններին և դրուած է սխալ հաշիւների վրայ, ահա այդ հարցերի լուսաբանութեան խնդիրն է, որ կաշխատենք պարզել գործիս ընթացքի մէջ։

VII

Բացատրելու համար, որ Ալէքսանդրապոլում Առևտրական դպրոց բանալու հարցը դրուած է եղել սխալ հաշիւների և խախուտ հիմունքների վրայ պէտք է յիշենք, որ թէ դպրոցական մասնաժողովը (որի մի անդամն էլ ես էի), թէ քաղաքային խորհուրդը և թէ այդ գործի մէջ ջերմ մասնակցութիւն ունեցող նախկին քաղաքագլուխ պ. Գ. Տէր-Պետրոսեանը

առաջնորդված էին միմիայն մի բարի և բուռն ցանկութեամբ, այն է՝ ինչ զոհողութեամբ էլ որ լինի, անպատճառ ունենալ մի արական միջնակարգ դպրոց, որի գոյութիւնը արդարև շատ կարևոր էր մեր քաղաքին։ Իր տեղում պարզեցինք, որ կառավարութիւնը չէր կամենում բանալ ռէալական դպրոց Ալէքսանդրապոլում, այդ պատճառով անհրաժեշտութիւնը ստիպում էր ընտրել և համաձայնել մի այնպիսի դպրոցական հաստատութեան վրայ, որը թէ հեշտութեամբ կարող էր դլուխ գալ և թէ հնարաւորութեան չափ աւելի գործնական օգտաւէտութիւն ունենար տեղական ժողովրդի պահանջին։ Խօսք չկայ, որ պ. Գ. Բայենդուրեանի նուիրաբերութիւնն էլ շատպեցրեց Առևտրական դպրոցի խնդիրը և քաղաքացիները համոզված էին թէ առանց մի կոպէկ ծախսելու էլ պէտք է ունենային այդ Առևտրական դպրոցը, ինչպէս պէտք է պարզենք իր տեղում։

Բայց արդարութիւնը պահանջում է խօսել, որ թէ դպրոցական մասնաժողովը իր նախագահով և թէ քաղաքային խորհուրդը ոչ մի լիակատար տեղեկութիւն և նոյն իսկ հասկացողութիւն չունէին Առևտրական դպրոցների տուած արդիւնքի մասին, որովհետև ինչպէս պարզեցինք, այդ տեսակ դպրոցների գոյութիւնը բոլորովին նոր էր թէ Ռուսաստանի և թէ մանաւանդ Կովկասի համար։ Միայն մի ընդհանուր համոզում կար, որ բղխում էր այդ տիպի դպրոցների ծրագրից և տեղային կեանքին համապատասխան կանոնադրութիւնից, այդ այն էր, թէ առևտրական դպրոցները, որպէս աւելի նորագոյն և գործնական հիմունքների վրայ դրված ինքնավար կրթական հիմնարկութիւն կարող էր տալ հասարակութեանը.—

Ա. Աշխատող, գործող և ընդունական առևտրական ոյժեր, տեղային առևտուրը և արդիւնաբերութիւնը առաջ տանելու համար. թէ այդպիսի դպրոցի ուսման պաշարը տալիս է աշակերտութեանը լիակատար և ամփոփ գիտելիքներ, մտնելու խակոյն կեանքի ասպարէզ։

Բ. Առևտրական դպրոցը, որպէս քաղաքային ինքնավարութեան ձեռօք կառավարող մի հաստատութիւն, կարող է աւելի էժան և մատչելի լինել թէ քաղաքին և թէ ծնողներին, քան թէ կլասիկական գիմնազիօնը կամ ռէալական դպրոցը։

Գ. Թէ երկաթուղու բացումով Ալէքսանդրապոլը դառնալու է կենտրոնավաճառ քաղաք և ընդարձակ յարաբերութիւններ ունենալու էր դրացի Պարսկաստանի և Տաճկաստանի հետ և թէ քաղաքը տնտեսապէս առաջադիմում է։

Դ. Թէ Ալէքսանդրապոլը պէտք է օգուտ քաղէ պ. Գ. Բայենդուրեանի կտակից, որի գումարը հաշուում էին 200,000 բուբլի, որը եթէ վերածուէր տոկոսաբեր թղթերի, քաղաքը ունենալու էր տարեկան 20000 ր. շահ. այդ ճանապարհով կարելի էր դարձնել դպրոցը գիշերօթիկ, ընդարձակել դիրքը, պակասեցնել ուսման պաշարը և շատացնել ձրիավարժների թիւը*)։

Կար մի այլ հանգամանք ևս, այդ այն էր՝ թէ հաստատելով Առևտրական միջնակարգ դպրոց, Ալէքսանդրապոլը բախտ է ունենալու հրաւիրելու իր մէջ մարմօտ 25 հոգի բարձրագոյն կրթութիւն ստացած մարդիկ, որոնք ծառայելով դպրոցին, միևնոյն ժամանակ օգտակար առաջնորդներ պիտի լինէին նաև քաղաքի մատուր առաջադիմութեան համար։ Ահա այդ հան-

*) Տես հաշիւ 1906—7 թ. երես 16։

ժամանքներն էին, որոնք պատճառ կամ անկիւնաքարեր դարձան Առևտրական դպրոցի հաստատման համար. իսկ ապագայ միջնակարգ դպրոցաւարտ երիտասարդութիւնը անշուշտ պահելու էր այդ բարոյական-կրթական շէնքի գլուխը և լրացնելու էր քաղաքացիների ջերմեռանդ ակնկալութիւնները։ Այժմ տեսնենք թէ իրականութիւնը,—դառն, անողոք և լուրջ իրականութիւնը ինչ է ասում մեր դպրոցաւէր և լաւատես քաղաքացիներին, ուր մնացին մեր քաղցր, մեղրածորան և անուշ երազները...

VII

Անշուշտ ամեն մի ծնող և ամեն մի քաղաքացի բարոյական պարտաւորութիւն ունի հոգալու և մտածելու թէ իր մատաղ սերունդը, որը լինելու է իր յաջորդ քաղաքացին, ինչպէս պէտք է դաստիարակի և ուրպիսի դպրոցում, որովհետև այդ բոլոր բնական պահանջները առաջ են գալիս որպէս ակնկալութիւններ իր ահագին նիւթական և բարոյական զոհաբերութեան դործից։ Այդ տեսակէտից կարծում ենք, որ մանաւորապէս մեծ պարտականութիւն կայ նաև մեր Առևտրական դպրոցի հոգաբարձութեան բարոյական գիտակցութեան վրայ, որը որպէս քաղաքի հասարակութեան կողմից ընտրուած մի մարմին և որպէս հոգաբարձու ծնող, պարտաւորութիւն ունի զոնէ տարին մի անգամ մի յատուկ ծնողական ժողովի առաջ հաշիւ տալ, քննութեան ենթարկել իր խնամքին յանձնուած դպրոցի պակասաւոր և արդիւնաւոր կողմերը, դպրոցի մանկավարժական-կրթական ուղղութեան ընթացքը և այդ միջոցով ծանօթացնել

նաև հասարակութեանը դպրոցի ուղղութեան և արդիւնաւորութեան հետ։

Բայց մենք ցաւ ի սիրտ պէտք է ասենք, որ մեր Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը, մեր տեսութեան ենթակայ քառամեակի մէջ, ոչ մի բաղձալի քայլ չէ արել այդ ուղղութեամբ։ Հաշէմատեանից չի երևում թէ Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը որքան և իցէ ջերմեռանդ սիրով օգտաւէտ գործունէութիւն ցոյց տուած լինէր դպրոցի անտեսական կրթական ուղղութեան մէջ կարողացած լինէր դպրոցական ուղղութեանը ազդել, ընդհանուրի- հասարակաց շահի տեսակէտից և հայրենիքում միջնորդ հանդիսացած լինէր աշակերտութեան և ուսուցչութեան թիւրիմացութիւնների մէջ։ Ընդհակառակը, մենք լսեցինք պ. Յովսէփ Տիգրանեանի զեկուցումից, որպէս նախկին հոգաբարձուից և քաղաքագլխից այնպիսի տխուր և ցաւալի փաստեր Առևտրական դպրոցի հոգաբարձութեան անգործունէութեան մասին, որից ինչպէս ասացինք, սարսափել կարելի է միայն։

Պարզուեց, որ դպրոցական անտեսական կառավարութեան մէջ բացակայում է խելացի խնայողութիւնը. դպրոցը չունի իր առարկաների ցուցակը. դպրոցի վարչութիւնը չէ կարողացել նոյն իսկ հաշիւ պահել իր ել և մուտքի մասին և այդ գործը յանձնել է քաղաքային վարչութեանը. իսկական պիտոյքների համար տարիների ընթացքում ուած փողերը գործ են դրուել աւելի շատ ուսուցիչների ռոճիկի վրայ. հոգաբարձութիւնը չի կարողացել հրաւիրել հմուտ և արժանաւոր ուսուցիչներ իր առաջարկած ռոճիկների համեմատ. նա չէ հոգացել, որ ուսուցիչները անտեղի բացակայութիւններից հեռու լինեն և արժանա-

ւորապէս կատարեն իրանց մանկավարժական պարտականութիւնները, — ընդհակառակը, Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը թշնամացած քաղաքային վարչութեան հետ, զբաղուած է եղել գաղտնի և յայտնի գանգատների գործով։ Հոգաբարձութիւնը շարունակաբար փող պահանջելով քաղաքային վարչութիւնից, բացարձակ հրաժարուել է հաշուէտուութիւնից և այդ բոլորը ժողովրդից ծածուկ պահելու քաջութիւնն է ունեցել։

Ուրիշ ճանապահով մեր Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը կատարել է, արդարև մի գերագոյն ծառայութիւն դպրոցի տնտեսական-բարոյական գործի մէջ, այդ այն է՝ որ հոգաբարձութիւնը քնքոյշ հոգացողութեամբ ազատել է հարուստ ուսուցիչների և քաղաքային վարչութեան մէջ մի քանի ծառայողների որդոցը ուսման վճարից, և սառնասիրտ, անգութ անտարբերութեամբ հեռացրել, արտաքսել է դպրոցից աղքատ քաղաքացիների որդիքը*)։

Գուցէ մեզ առարկեն թէ այդպիսի մի կարգադրութիւն եկել է բարձրից, թէ դպրոցում ծառայող ուսուցիչների որդիքը պէտք է ազատ լինեն ուսման վճարից, բայց այդ բանը մեզ համոզեցուցիչ չէ, որովհետև հոգաբարձութեան վճռով է միայն գործադրում դուել այդ վերին աստիճանի անարդար օրէնքը, երբ այդ օրէնքից օգտուում են հարուստ ուսուցիչները և քաղաքային պաշտօնեաները, որոնք շատ լաւ ռոճիկներ են ստանում, կալուածատէր են և կողմնակի աշխատանքներով ապահովուած,

*) Տես հաշիւ դպրոցի 1905—6 տարի, երես 55։ Այդ դպրոցական տարւայ մէջ հոգաբարձութիւնը ունեցել է միայն 5 նիստ, քննութեան է տուած եղել 42 հարցեր և վճռել են միայն 8-ը, մէկն էլ այդ հարցն է։

Մեր բարոյախօս ուսուցիչները շատ լաւ գիտեն, որ բացի թղթի օրէնքից կայ նաև խղճի օրէնք, արդարութեան, բարոյականութեան և քաղաքացիական առաքինութեան օրէնք, որոնք բոլորը միասին թելադրում են հարուստին չխլել աղքատի հացը, ոյժի իրաւունքով չբռնել աղքատ աշակերտի առաջադիմութեան ճանապարհը և աղքատ քաղաքացու որդուն չհեռացնել ուսման տաճարից... Կրթութեան տաճարում, որտեղ մատաղ սերունդը պիտի ընտելանայ մարդկային հաւասարութեան զգացմունքի հետ, այնտեղ, ուր դասակարգային խտրութիւնը և նիւթական հաշիւները չպիտի պղտորեն մաքուր մանկական սրտերը, ականատես ենք եղել, որ աղքատ քաղաքացու որդուն արտաքսած են եղել դասարանից, իսկ հարուստ վարժապետի և քաղաքային պաշտօնեայի որդին յոխորտալով մտել է դասարան և ձրի է սովորել գիտութիւնը։

Քննելով մեր Առևտրական դպրոցի հոգաբարձութեան անփոյթ թուլութիւնները, ուսուցչական մարմնի անգործնէութիւնը, դպրոցի կանոնադրութեան պակասաւոր կողմերը, այլև ի նկատի առած Առևտրական դպրոցի հասակը, շրջապատող հանգամանքները. ժամանակը և դպրոցի վրայ եղած ահագին ծախսերը, մենք ցաւօք սրտի պէտք է ասենք, որ Ալէքսանդրապօլի Առևտրական դպրոցը բոլորովին չի արդարացրել և չի էլ արդարացնելու հասարակութեան իղձերն ու ակնկալութիւնները, չէ տուել և չի էլ տալու այն արդիւնքը, ինչ որ հասարակութիւնը սպասում է այդ դպրոցից։ Ընդհակառակը, իրականութիւնը հաստատում է, որ Ալէքսանդրապօլի Առևտրական դպրոցի սանները, որպէս միջնակարգ դպրոցական դպրոցի սանները, ոչ պակաս ենք աւարտողներ, լիակատար և ամփոփ ուսմունք չեն

դուրս բերել այդ դպրոցից, որ կարող լինէին անխափան մտնել կեանքի ասպարէզ և օրինակելի գործունէութիւն ցոյց տային գոնէ տեղական առևտրական և արդիւնաբերական գործունէութեան մէջ։ Ապացոյցները բազմաթիւ են, բայց մենք յիշենք միայն մի քանիսը։

Մենք գիտենք, որ մի քանի դպրոցաւարտներ ստիպւած եղան մտնելու Երևանի գիմնազիան նորից սովորելու և քննութիւն տալու, որպէսզի հնարաւորութիւն ունենան շարունակելու ուսմունքը բարձրագոյն դպրոցներում. մի քանիսը անցան արտասահման և անյաջողութեամբ վերադարձան հայրենիք, մի քանիսը միայն կարող եղան շարունակել իրանց ուսմունքը Մոսկւայի առևտրական բարձրագոյն կուրսերում և այլ տեղեր, և որոնց հասունութեան վկայագրերը վստահելի չեն եղել և համարւում են գիտութիւններից բոլորովին թոյլ պատրաստւած աշակերտներ*), իսկ շատերը մինչև այսօր էլ ոչ մի գործ չգտան, պարապ են և անյաջողութեան մատնւած։ Իսկ Ալէքսանդրապօլի իրականութեան, առևտրական արդիւնաբերութեան կեանքի մէջ չկայ և ոչ մի անհատ այդ դպրոցից դուրս գալած, որի գործունէութիւնը պատկերացնէր մեզ, մեր Առևտրական դպրոցի պատրաստած աշակերտների իրական արժանիքը։ Հրապարակում չկայ և ոչ մի դպրոցաւարտ այդ դպրոցից մեր հասարակական-կրթական կեանքի մէջ, որի ընդունակութեան չափով կարելի լինէր ծանօթանալ և մօտակայ գաղափար կազմել մեր Առևտրական դպրոցի պատրաստած աշակերտի պիտանաւորութեան մասին։ Եւ համարձակ կարող ենք ասել, որ երբէք էլ մեր ակնկալութիւնները չեն արդարանալու։ Ինչու։ Որովհետև մեր խորին համոզմամբ, Ալէքսանդրապօլի Առևտրական դպրոցը իր ներկայ ըիւրոկրատիկ ծրագրով և ուղղութեամբ իր ներկայ կազմով ձգտումներով և հարազատ չէ մեր իրական կեանքի պահանջներին, մօտեցրած չէ երկրի և ժողովրդի էական կարիքներին, խորթ է տեղային վաճառականութեանը, արհեստին և արդիւնաբերական պահանջներին։ Եւ եթէ մենք սխալւած ենք, ուրեմն պէտք է ճանաչենք մեր սխալը։ Այդ դպրոցը, որ պէտք է մեր կարծիքով աշխատանքի ընդունակ մարդիկ պատրաստէր, ինքնըստինքեան ներկայացնում է մարմնացած ազնւապետական մի հիմնարկութիւն, դպրոցը ներշնչում է աշակերտութեանը աւելի շատ լաւ հագնւելու, քիչ աշխատելու, հանգիստ լինելու և աւելի շատ «զ ա ր գ ա ց ա ծ» պահանջներ արտայայտելու բոլոր տենչանքները։ Եւ զարմանք չէ, որ դպրոցի պ. վերատեսուչը մօտ օրերս կարգադրել էր, որ նորին գերազանցութեան պ. Ֆիշերի պաշտօնական այցելութեան առթիւ դպրոցից հեռացրած լինէին «չուստիկ» հագած կամ կարկատած հագուստ ունեցող աշակերտները, որպէսզի նորին գերազանցութիւնը բարեհաճէր տեսնել դպրոցի արտաքինը գերազանց դրութեան մէջ.—

Իսկ ներքինը...

Կարծում ենք, որ աւելի լաւ կլինէր, եթէ պ. Ֆիշերը ծանօթանար Առևտրական դպրոցի գործերի հետ և տեսնէր մեր Առևտրական դպրոցը իր իսկական դրութեան մէջ, որպէսզի գաղափար կազմէր նաև աշակերտութեան տնտեսական կարողութեան մասին և հաւատացած ենք, որ պ. Ֆիշերը ինքը առաջինը կլինէր խնդիր բարձրացնող՝ կրճատելու մեր

*) «Живое Слово», № 17, 1910 г.

Առևտրական դպրոցի ուսուցիչների ներկայ չափազանց մեծ ռոճիկները և պակասեցնելու աշակերտների ուսման վճարը։ Մենք համաձայն չենք այդ դպրոցի աշակերտ պ. Ղազանճեանի հետ, թէ այդ դպրոցի աշակերտութիւնը երբեմն մի օրդա էր*) և միայն ներկայ վերատեսչի օրօք դրուած է խաղաղ ուսման դրութեան մէջ, բայց ընդունում ենք, որ իրաւի, այդ դպրոցի անհաստատ վիճակը հետևանք է աշակերտութեան անդաստիարակութեանը, որը աւելի խորը և յատուկ պատճառներ ունի և հետզհետէ հրապարակ են գալիս թէ դպրոցի կանոնադրութեան թերութեան և թէ կրթական-տնտեսական-բարոյական այլ և այլ պայմանների հետ։

Բայց մի րոպէ ընդունենք, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը բացառութիւն է կազմում բոլոր առևտրական դպրոցների մէջ և այդ դպրոցը աւարտած „բոլոր աշակերտներն էլ լաւ գիտեն զանազան լեզուներ**)։ հասկանում են բոլոր կլասիկ հեղինակների գրուածքները, կարող են հաշուել ամենաբարդ և մեծ խնդիրներ, կարող են որոշել Աֆրիկայի և Աւստրիայի բոլոր գետերի ընթացքը, ծանօթ են Ամերիկայի բոյսերի տեսակների և կենդանիների հետ, գիտեն պատմել նախաջրհեղեղեան շրջանի մարդոց կեանքը, ընդունակ են թափանցելու արեգակի և մոլորակների տեսութեան մէջ և այլն, բայց այդ բոլոր գիտութիւնները ունենալուց յետոյ էլ, հաւատացած ենք, որ անծանօթ են մնալու և մնացել են մեր

*) «Живое Слово» № 36—1910 г.

**) Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը աւարտած մի աշակերտ չէր կարողացել գոնէ ուղիղ գրել ռուսերէն մի հասցէ և գրել էր «Господину Алексаидропольскому Городскому Управу» տես «Живое Слово» № 17—1910 г.

հայրենագիտութեանը, տեղային վաճառականութիւնը, առևտրական արդիւնաբերական պայմաններին և գիւղատնտեսութեանը որ է կէտ նպատակ նոյն իսկ առևտրական գիտութիւնների։ Առևտրական դպրոցի դրացուցակի մէջ (երես 90) տեսնում ենք, որ բնագիտութեան առարկայից շաբաթական նշանակուած է միայն երկու դաս և այն էլ մինչև V-րդ դասարանը, իսկ գիւղատնտեսական գիտութիւնը բոլորովին բացակայում է այդ դպրոցից։ Այդ պակասութիւնը կարծում ենք, որ չէր լինի, եթէ դպրոցի վարչութիւնը ըմբռնած լինէր, որ առանց ընդարձակ ծանօթութեան բնական արդիւնաբերական ճիւղերի և առանց գիւղատնտեսական գիտութեան Առևտրական դպրոցի գիւղանդակութիւնը դառնում է անպատակ, որովհետև առևտրական գիտութիւնը ամենասերտ կերպով կապուած է բնական և արդիւնաբերական գիտութեան հետ։ Եւ ինչպէս կարող է աշակերտը լիակատար և ամփոփ գիտելիքներ դուրս բերել այդ դպրոցից, երբ դպրոցի վարչութիւնը իր գլխաւոր նպատակը չէ դրել ուսումնասիրել տեղային վաճառականութիւնը, տեղային արդիւնաբերութիւնը և գիւղատնտեսութիւնը, տեղային և դրացի դաւառների տնտեսական պայմանները, երբ մինչև այսօր գոնէ մի հրապարակական փորձ կամ մի դասախօսութիւն չի եղել դպրոցում այդ ուղղութեամբ։ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի պատերը վկայ են, որ այդ դպրոցում տարին մի անգամ եղել են դպրոցական հանդէսներ, որտեղ ի ցոյց հասարակութեան հանդէս են հանել միայն մի քանի «առաջադէմ» աշակերտներ արտասանելու մի երկու աղքատ ոտանաւորներ կամ կարդալու մի թեթև գրուածք, իսկ ուսուցիչներից մի քանին էլ անսահման ողևորութեան մէջ գովել են

Գոգոլի, Կալցովի հանճարները, բայց և այնպէս ցաւալի փաստը մնացել է այն, որ դպրոցի վարչութիւնը գոնէ տարին մի անգամ էլ հանդէս չի հանել իր «զարգացած» սանները, խօսելու և դատելու տեղային և արտաքին առևտրական գիտութիւնների մասին, որն է դպրոցի կէտ նպատակը։ Առևտրական դպրոցը իր պատրաստած զարգացած աշակերտներով կամ ուսուցիչներով մի անգամ էլ չի բացատրել տեղային «ազէտ» առևտրականներին, թէ ինչ է առևտուրը, այդ պարապմունքի իսկական նպատակը, ուղղութիւնը և թէ բարելաւութեան պայմանները։

Այդ ցանկալի ճանապարհով գուցէ կարելի լինէր հասկանալ, թէ որքան կենսականութիւն ունի Առևտրական դպրոցը և ինչ չափով ծառայած է նա տեղային ժողովրդի իրական կարիքներին։ Մենք գիտենք, որ դպրոցի վարչութիւնը որպէս զուարճութիւն իր աշակերտներին տարել է ծանօթացնելու Կողբի աղահանքի, Հաղպատի պղնձի ձուլարանի և Բագուի նաւթային հորերի և այլ աւելի բարդ ու խոշոր արդիւնաբերական գործարանների հետ, որոնց ուսումնքը մի գեղեցիկ և ցանկալի առարկայ է Առևտրական դպրոցի աշակերտների համար։ Բայց այդ անհրաժեշտութեան հետ միասին, կարծում ենք, որ գոնէ տարին մի անգամ էլ շրջագայելու էին աշակերտները իրանց հայրենի գաւառը, ծանօթանալու տեղն ու տեղը գաւառի գիւղացիութեան և գիւղատնտեսական ճիւղերի հետ, ծանօթանալու այն միջավայրի հետ, որի համար որպէս թէ պատրաստւում են գործելու։ Ահա այդ է պատճառը, որ մինչև այսօր մենք չենք տեսել մի առևտրականի որդի մեր Առևտրական դպրոցից դուրս եկած, որ կանգնած լինէր իր հօր գործի մօտ, գոնէ վայրկենապէս ծանօթանալու տեղային առևտրի, արհեստի կամ արդիւնաբերական պայմանների հետ. տեղային առևտուրը, արհեստը և արդիւնաբերական ճիւղերը արհամարհելի են մեր «զարգացած» առևտրական աշակերտներին...

Առևտրական դպրոցը, որ կոչուած է գործնական կեանք ստեղծելու, գործնական մարդիկ պատրաստելու, այդ դպրոցը իր ուղղութեամբ ներկայացնում է անգործութեան մի լայն կենտրոն։ Առևտրականի համար, որի համար ամեն մի բոպէն հաշուած է և թանգ, առևտրականի համար, որի ժամանակը ոսկի է և պէտք է շահաւէտութեան մէջ գործադրել, մեր Առևտրական դպրոցի համար այդ բանները անհասկանալի են և զարմանք չէ, որ դպրոցում պարապմունքի օրերն են 143, իսկ Առևտրական դպրոցում դասախօսող ուսուցիչների բաց թողած դասերի թիւն է 510 (երես 61)։ Գուցէ այդ բանը ուսուցիչների «հիւանդութեան» և այլ «յարգելի» պատճառներից է առաջացել, բայց հետաքրքիր աչքը կարող է տեսնել, որ ահագին ժամանակ և շատ անգին օրեր էլ կորել են զանազան աննպատակ հանդէսների, քննութիւնների և այլ նման պէտքերի պատճառով, որով Առևտրական դպրոցը իսկապէս «օրդա» է դարձել և մնացել բացարձակ դատարկութեան և անգործութեան մէջ (եր. 63)։ Աշակերտական այդ անգործ-ծուլութիւնից առաջ են եկել, այո, այնպիսի մոլորութիւններ, որոնց արմատը պէտք է որոնել հէնց դպրոցում հաստատուած «բուֆէտի» շուրջը և դպրոցի ներքին մթնոլորտում, որոնց դէմ չի կարող կուռել ոչ ընտանեկան և ոչ էլ հասարակական ազդեցութիւնը։ Այդ աննպատակ պայմանների հետևանքը այն է եղել, որ ամրողջ դասարաններ մնացել են թոյլ և վերաքննու-

թեան ահռելի երկիւղի տակ և զարմանք չէ, որ 383 աշակերտներից վերաքննութիւն են ունեցել 122 աշակերտներ...

Անշուշտ այդպիսի թոյլ պատրաստականութիւն ունեցող աշակերտութիւնը չի կարող դպրոցից դուրս բերել այնպիսի ամփոփ գիտելիքների պաշար, որ դպրոցաւարտը կարողանար մտնել իսկոյն կեանքի ասպարէզ և գործել իր հայրենիքի առաջադիմութեան համար։ Ամենաշատը մեր Առևտրական դպրոցը իր անհարատաս ուղղութեամբ և ներքին անկատարելութեամբ, ընդունակ է աւելի շատ և տարիների ընթացքում շատացնելու դժբախտ անյաջողակների թիւը, աշակերտութեանը հեռացնելու է տեղային կեանքի պայմաններից և իր ըիւրօկրատիկ ուղղութեամբ լցնելու է միայն աշակերտների գլուխը «Кандитать коммерцій» լինելու ցնորքները, որը իրականութեան մէջ հաւատացած ենք, որ հաց չի տալու իր տիրոջը։ Եւ այդպիսով քանի որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը դեռ ևս հանդէս չէ հանել իր հիւթալից պտուղները, քանի որ այդ դպրոցից դուրս գալած մարդիկ, դպրոցաւարտները այս կամ այն պատճառով հեռացած են տեղային առևտրական, արդիւնաբերական և գիւղատնտեսական կեանքից,— ինքնրստինքեան հասկանալի է, որ դպրոցը չէ տալիս աշակերտութեանը լիակատար պաշար և պատրաստականութիւն մտնելու տեղային կեանքի ասպարէզ և հէնց այդ մի հզօր պատճառով էլ Ալէքսանդրապոլի հասարակութեան համար այդպիսի ակընկալութիւնը կատարեալ յուսախաբութիւն է։

IX

Երկրորդ կարևոր և լուրջ նշանակութիւն ունեցող հարցն այն է՝ թէ Ալէքսանդրապոլում Առևտրական դպրոց հիմնելը և այդ դպրոցում ուսման վճարը աւելի էժան պէտք է լինի քաղաքի և ծնողների համար, քան թէ կլասիկական գիմնազիոնը կամ ռէալական դպրոցը։ Այդ հաշիւն էլ կարծում ենք, որ հիմնովին սխալ դուրս եկաւ։ Ինչպէս իր տեղում պարզեցինք, Ալէքսանդրապոլի քաղաքային խորհուրդը իր մարտի 9-ի 1899 թ. նիստում հազիւ հազ քաջութիւն էր ունեցել քաղաքի սնդուկից տարեկան 7000 ր. տալ և վարձել բնակարան, եթէ կառավարութիւնը յանձն առնէր բանալ ռէալական դպրոց և մերժում էր ստացել։ Դպրոցական մասնաժողովը, որ քննում էր այդ խնդիրը, ի նկատի ունէր, որ բոլոր քաղաքներում միջնակարգ դպրոցները բացւում են պետութեան օժանդակութեամբ, որովհետև կատարում են ընդհանուր կրթական պարտաւորութիւններ և դասավճարի չափն էլ այդ պատճառով մատչելի է ժողովրդի մեծամասնութեանը։ Իսկ Ալէքսանդրապոլը զրկւած է պետական նիւթական պաշտպանութիւնից, այսպէս ունէր պահել իր սեփական միջոցներով մի առևտրական դպրոց, յուսալով թէ, աշակերտների թիւը հասնելու էր գոնէ 700—800 հոգու։

Այսպէս օրինակ, մասնաժողովին յայտնի էր, որ Դերբենտի ռէալական դպրոցում ուսման վճարն էր 40 ր., Վլադիկավկազինը 55 ր., Շուշանը 65 ր., Բագինը 75 ր, և Թիֆլիսինը 80 ր., իսկ արական գիմնազիոնները Գանձակում 60 ր., Երևանում 62 ր., Բագում 62 ր., Սաւրապոլում 62 ր. և Թիֆլի-

սում 80 ռուբլի։ Այդ թվերը արդէն ցոյց են տալիս, որ կառավարութիւնը դպրոցական ուսման վճարը և ուսուցիչների ռոճիկները միշտ յարմարեցրել է տեղային պայմաններին և աշակերտների թվի հետ*)։

Այժմ տեսնենք, թէ մեր Առևտրական դպրոցը որքան էժան է նստել մեր քաղաքին և թէ ուսման վճարը որքան համապատասխան է ժողովրդի վճարողական կարողութեանը։

Ինչպէս յայտնի է, Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը ոչ մի կողմէ օժանդակութիւն չէ ստանում կառավարութիւնից, թէև այդ դպրոցը որպէս միջնակարգ հաստատութիւն կատարում է իր կրթական պարտաւորութիւնը պետական շահի տեսակէտից։ Դպրոցի կանոնադրութեան համաձայն, քաղաքը իր վրա է առել բոլոր դպրոցական ծախսը, այդ պատճառով քաղաքը ստիպուած է նշանակել ամենաբարձր ամսավճար, այն է՝ 80—100 և 120 ր. կամ միջին հաշուով 100 ր.։ Մեր ձեռքի տակ եղած հաշուից երևում է, (1906—7 թ.) որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի ընդհանուր ծախսն է 48,857 ռուբլի, իսկ թոշակագրամ ստացուում է 33,655 ր., որով քաղաքի տարեկան ծախսն է այդ դպրոցի պահպանութեան համար 13,902 ռուբլի և 2000 ռուբլի պ. Բայենդուրեանի տարեկան օժանդակութիւնից։ Բացի այդ տարեկան ծախսից քաղաքը ծանր և անելանելի պարտքի տակ ընկած, շինել է դպրոցի հոյակապ շէնքը, որի արժէքն է 180,000 ր., որից դպրոցի բաժինն է ընկնում երկու յարկը 120,000 ր. և այդ դրամագլխի տարեկան տոկոսն է միայն 12,000 ր.։

Այստեղ չենք յիշում դպրոցական շէնքի, տա-

*) Այդ դպրոցներում աշակերտների թիւն է ամենաքիչը 521 և շատը 1137 հոգի։

քութեան, լուսաւորութեան, նորոգութեան և այլ դպրոցական առարկաների վրայ եղած տարեկան ծախսը, դպրոցական շէնքի և առարկաների հետզհետէ ոչնչանալը, որոնց գումարը բաւական խոշոր թվերի է հասնում և ապացուցանում է, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի պահպանութիւնը ոչ թէ էժան, այլ շատ ու շատ թանգ է նստում քաղաքի սնդուկի և ծնողների վրայ, քան թէ պետական հաշուով եղած ռէալական կամ կլասիկական դպրոցը*)։

Արդեօք ինչ է պատճառը, որ այդքան թանգ է Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը։ Առաջին և ամենամեծ պատճառն այն է, որ Առևտրական դպրոցի ուսուցիչների դասավճարը շատ բարձր է, քան թէ այլ միջնակարգ դպրոցներինը։ Գործիս վերջում դրուած է Առևտրական դպրոցի ուսուցիչների դասավճարի աղիւսեակը, որից ընթերցողը կարող է հեշտութեամբ նկատել, որ մեր դպրոցում դասավճարի չափը ամենաբարձրն է։ Քսան և մէկ ուսուցիչներ, որոնք պարապել են 25 շաբաթ կամ 150 օր և օրական 4 ժամ,—ստացել են 38,520 ր. և դեռ բաց են թողել 510 դասեր։

Թող ընթերցողը չկարծէ թէ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի ուսուցիչները բոլորն էլ ցենդով, ծագումով զուտարիւն ազնուականներ են կամ ամենաբարձր կրթական, մանկավարժական փայլուն հռչակ ունեցող անձնաւորութիւններ, որոնք արժանի են իրաւի, այդպիսի առատ վարձատրութեան։ Մենք գիտենք և ճանաչում ենք, որ ուսուցիչների

*) Տես յաւելված Բ. որից երևում է, որ ներկայ 1911 թ. դպրոցի ծախսն է 60,000 ր., իսկ մուտքը 38180 ռուբ.։ Ուրեմն քաղաքը ծախսն է ամէն տարի 21820 ռուբ. չհաշուած դպրոցական առարկաների արժէքը և տոկոսը։

մեծ մասը սովորական մարդիկ են, որոնք միայն բախտի բերմամբ ընկել են Ալէքսանդրապոլ և օգուտ քաղելով հոգաբարձական մարմնի թուլութիւնից,— ստանում են շատ ու շատ աւելի քան կարող էին ստանալ ուրիշ տեղեր և փառաւորապէս պարարտացնում են իրանց գրպանները։ Ցաւում ենք, որ դրպրոցի հաշուի մէջ չէ յիշատակուած այդ ուսուցիչների կրթական աստիճանի և մանկավարժական անցեալ արժանիքի մասին, թէև վերին աստիճանի քնքշութեամբ գրուած է այդ ուսուցիչների ունեցած շքանշանների թիւը և աստիճանը (երես 31)։ Դասավճարը անշուշտ նշանակուած է բարձրագոյն կրթութեան տէր մասնագէտների համար, իսկ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցում դասաւանդում են միջնակարգ դպրոցներից և սեմինարիայից դուրս եկած անհատներ, որոնք միևնոյն առարկաները ուրիշ դրպրոցներում աւանդելիս պէտք է ստանային կէսը, մինչև անգամ մի երրորդականը, ինչպէս ստանում են տեղիս իգական գիմնազիայում կամ ինչպէս դաւառական և այլ դպրոցների ուսուցիչները, որոնց ջանասիրութիւնը և ժրաջանութիւնը, կարծում ենք, որ պակաս չէ, քան Առևտրական դպրոցի ուսուցիչները։ Եթէ մի դպրոցում 383 աշակերտից 122-ը վերաքննութիւն են ունեցել, նշանակում է ոչ թէ միայն աշակերտներն են ծոյլ և անընդունակ, այլև պակասաւոր կողմեր ունի նաև մանկավարժական կազմը, որ հոգաբարձութեան անհոգութեան պատճառով, իր անգործունէութեան մեղքը գցել է խեղճ աշակերտների վրայ և անմշակ ծառերից քաղցր, հիւթալից պտուղ է պահանջում։

Մի սրտացաւ հոգաբարձու, ցանկանալով բարձրացնել Առևտրական դպրոցի նշանակութիւնը, փաստաբանում էր, թէ Առևտրական դպրոցները, բոլոր միջնակարգ դպրոցների մէջ առաջնակարգ տեղ են բռնում և այդ է պատճառը, որ Առևտրական դպրոցի ուսուցիչները, որպէս բարձրագոյն ուսման տէր անձինք, պէտք է որ ստանան ամենաբարձր դասավճար։ Բայց փաստը, անհերքելի պաշտօնական վիճակագրութիւնը հաստատում է, որ Առևտրական դպրոցներից դուրս եկած աշակերտներից հազիւ թէ 33% ընդունւում են բարձրագոյն դպրոցներում, որով ընդհանուր զարգացման կողմից, Առևտրական դպրոցները յետ են մնում ռէալական դպրոցից և գիմնազիաներից[1])։ Բայց ամենացաւալին այն է, որ մեր Առևտրական դպրոցում աշակերտութեան մեծամասնութիւնը կազմում են միջին դասի քաղաքացիների որդիքը։ որով տնտեսական ծանրութիւնն էլ իր ճնշող հետևանքներով ընկնում է այդ տնտեսապէս անապահով դասի վրայ։ Առևտրական դպրոցի 383 աշակերտներից ազնուական դասին պատկանում են 41 հոգի։ հոգևորական դասին 6, վաճառական դասին 43, մանրավաճառ արհեստաւորների դասին 201, երկրագործ դասին 64, այլ և այլ զբաղմունքի 23 աշակերտներ։

Բաժանելով այդ թիւերը տնտեսական ապահովութեան վրայ, մենք տեսնում ենք, որ առաջի դասը աւել է 90 աշակերտներ, որոնցից շատերը որպէս հարուստ ուսուցիչների և քաղաքային վարչութեան մէջ լաւ ռոճիկով ծառայողների որդիք ընկել են ձրիավարժների ցուցակի մէջ[2]), իսկ մնացած մեծագոյն մասը, այն է 293 աշակերտներ, որպէս միջին դասի, հպատակ և հարկատու թշուառներ,

[1]) «Բեգլ» № 276—1910 Ր.

[2]) Տես յաւելած Ա.

կրում են դպրոցի անագին նիւթական ծանրութիւնը։ Դրութիւնը շատ ցաւալի է։

Այդ պաշտօնական թուերը արդէն ապացուցում են, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը պահւում է միջին և աղքատ դասի վճարով, անապահով դասը ստիպուած է հոգալու հարուստ դասի կրթութեան գործը։ Բուն առևտրական դասը—վաճառականութիւնը, որի համար որպէս թէ պէտք է աւելի պիտանի լինի Առևտրական դպրոցը, ունի ֆ միմիայն 43 աշակերտներ։ Այդ բանը արդէն անվիճելի է դարձնում այն փաստը, որ վաճառական-առևտրական դաս, լայն իմաստով գոյութիւն չունի Ալէքսանդրապոլում, այդ միջնակարգ դպրոցը լցնել մանրավաճառների, արհեստաւորների որդիքը, որովհետև քաղաքումս ուրիշ միջնակարգ արական դպրոց գոյութիւն չունի։ Եւ ահա այդ դասի շահը պահանջում է, որ Առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէ մեծամասնութիւն կազմող աշակերտութեան պահանջը և Առևտրական դպրոցին այնպիսի ուղղութիւն տայ, որ դպրոցը կարող լինի հրապուրել դէպի կրթութիւն աւելի բազմաթիւ աշակերտներ և պիտանի լինի երկրի մեծամասնութեան էական կարիքներին։ Առևտրական մեծամասնութիւն կազմող աշակերտները—մանրավաճառների և արհեստաւորների որդիքը, բացի ուսման ծանր վճարից, ենթակայ են մշտապէս նաև մի այլ անխուսափելի զրկանքի։ Դպրոցի 383 աշակերտներից 104-ը վերաքննութիւն են ունեցել, իսկ 18-ը մնացել միևնոյն դասարանում։ Այդ դրութիւնը սոսկալի է դառնում, երբ մտածում ենք, որ միջին և աղքատ դասի աշակերտները, որոնց ընտանեկան պայմանները այնքան էլ նպաստաւոր չեն կրթական առաջադիմութեան համար, ունեցել են վերաքննութիւններ մի քանի առարկաներից, խղճալիները պէտք է դիմեն այս կամ այն ուսուցիչին*), այս կամ այն ուսուցչի տիկնոջը, որպէսզի հնարաւորութիւն ունենան ազատուելու սոսկալի քննութիւնների հետևանքներից։

Խեղճ ծնողներից շատերը իհարկէ համարձակութիւն չեն ունենայ դիմելու զարգացած ուսուցիչների խղճի ձայնին, որ գոնէ հաշիւ տան իրենց խղճին, հաշիւ տան իրանց բաց թողած դասերի համար, գոնէ մի բոպէ մտածեն թէ ինչ են սերմանել, որ եկել են հնձելու և այն էլ ամենասուր մանկաղների միջնորդութեամբ։ Յարգոյապատիւ հոգաբարձութիւնն էլ հետամուտ չէ հասկանալու թէ արդեօք Ալէքսանդրապոլի երեխաներն են անընդունակ ուսման մէջ, թէ՞ ուսուցիչների կողմից էլ կան, այո, այնպիսի անթոյլատրելի «պաշտօնական» բացակայութիւններ, որով Առևտրական դպրոցը փոխանակ առաջադիմելու, մեծանալու, մնացել միևնոյն քարացած դրութեան մէջ, որովհետև այդ դպրոցի նոր բացման օրը 1902—3 թ. եղել են 327 աշակերտներ, իսկ 5 տարուց յետոյ էլ դարձեալ նոյն քարացած թիւն է 383 հոգի. ոչ մի առաջադիմութիւն։ Առևտրական դպրոցի ուսման վճարի ծանրութիւնից յետոյ, պէտք է յիշենք դպրոցական հագուստի, դասագրքերի և այլ դպրոցական պիտոյքների չափազանց թանգութիւնը, որը անտանելի կերպով ճնշում է և հեռացնում աշակերտութեան մեծամասնութիւնը

*) Կրթութեան անուն տակ կատարուող այդ տեսակ հարստահարութիւնը սոսկալի է։ Վերաքննութեան և թաւարտաստ

դպրոցից։ Պարզելու համար այդ հարցը, մի ըռպէ ենթադրենք, որ մի մանրավաճառ կամ արհեստաւոր, որը ունի երկու-երեք որդիներ և ցանկանում է բոլորին էլ միջնակարգ կրթութեան տալ, այդպիսին իսկապէս պէտք է քայքայւի դպրոցական ծախսերի տակ։ Տարեկան մի երեխայի ծախսը լինում է 200 ռուբլի, իսկ մինչև աւարտելը 10 տարին 2000 ռ.։ Կարող է արդեօք այդ ծախսը մատչելի լինել և հաշիւն էլ իրականութեան մէջ գոյութիւն ունենալ։ Նոյն իսկ մի միջակ մանրավաճառ կամ մի կտոր չոր հաց ունեցող արհեստաւոր կարող է յուսալ թէ նա կարողանայ այդպիսի սոսկալի տնտեսական զոհաբերութեամբ միջնակարգ կրթութիւն տալ իր երկու-երեք կամ չորս որդոցը, թէ պէտք է մէկին զրկել միւսի բախտաւորութեան համար։ Շեշտում ենք, որ աշակերտութեան մեծամասնութիւնն էլ հէնց այդ անապահով դասն է։

Ահա այդ բոլոր հարցերը ի նկատի առած, պէտք է ասենք, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը ոչ թէ էժան, այլ շատ ու շատ թանգ է նստել թէ քաղաքի և թէ քաղաքացիների համար, քան թէ կառավարութեան առաջարկած ըէալական դպրոցը կամ նոյն իսկ գիմնազիօնը։ Դպրոցի դասավճարի էժանութեան հարցը կապւած է անշուշտ աշակերտների թւի շատութեան հետ։ Իսկ մեր Առևտրական դպրոցը, ինչպէս իր տեղում նկատել ենք, չի կարող ներկայ ուղղութեամբ շատացնել աշակերտների թիւը, որովհետև դպրոցը հեռու է ժողովրդի մեծամասնութեան իրական պահանջից։

X

Երրորդ հարցն է թէ երկաթուղիի բացումով մեր քաղաքը պէտք է դառնայ նշանաւոր վաճառական քաղաք, որը ընդարձակ յարաբերութիւն ունենալու է նոյն իսկ դրացի Տաճկաստանի և Պարսկաստանի հետ և թէ մեր քաղաքը տնտեսական առաջամութեան մէջ է, այդ բանն էլ ինչպէս իր տեղում պարզեցինք, բոլորովին դատարկ դուրս եկաւ, որովհետև երկաթուղին միանգամայն քանդեց մեր քաղաքի և գառառի տնտեսական դրութիւնը, խլեց գիւղացիներից ահագին քանակութեամբ ապրանքներ տեղափոխելու գործը, որը մեծ առևտրի պատճառ էր լինում. լցրեց քաղաքը և գաւառը ուրիշ տեղերի արհեստական արդիւնաբերական պիտոյքներով և մեռցնելով տեղական արհեստը, քամեց տեղային առձեռն պատրաստի դրամը։ Ով կասկածում է այդ բանում, խորհուրդ ենք տալիս հետաքրքիր թւանշաններ ձեռք բերել երկաթուղու միջոցով ներմուծած ապրանքներ գումարի և արտահանութեան գործից, տեղական բանկերի դրամական փոխադրութեան գործողութիւններից, որոնք բոլորը միասին հաստատում են, որ երկաթուղին միմիայն ներմուծեց դրսից թէ զանազան ապրանքներ և ալիւր և թէ քամեց մեր քաղաքի ու գաւառի աշխատանքի բոլոր յայտնի աղբիւրները։ Միանգամայն ծիծաղելի է նաև այն յոյսը, թէ մեր Առևտրական դպրոցի աշակերտները, առանց մի բառ անդամ գիտենալու թուրքերէնից, կարող են ասպարէզ գտնել դրացի երկրներում։ Այդ կողմից կարող ենք հաւատալ, որ Տաճկաստանի և Պարսկաստանի մէջ գործում են այնպէս ժրաջանութեամբ և տեղային

բոլոր պայմանների զէնքերով օժտուած տեղային Եր-
իտասարդները, որոնց պատրաստականութեան դէմ
մեր Առևտրական դպրոցի աշակերտները շատ թոյլ
արարածներ են։ Եւրոպական ազգերի առևտրական
հիմնարկութիւնները ընդարձակ իրաւունքներով և
պետական պաշտպանութեան շնորհիւ ահագին քանա-
կութեամբ լցրել են այդ երկրների շուկան իրանց
արդիւնաբերական գործերը, իսկ ճարպիկ, խելացի և
գործնական փորձառութիւն ունեցող, տեղային երի-
տասարդութիւնը, բնականապէս պէտք է խոչընդոտ
դառնայ օտար երկրի առևտրական գործիչներին,
այդ բնական մրցութեան դէմ չեն կարող կանգնել մեր
Առևտրական դպրոցի աշակերտները։ Այդ խնդիրը
աչքի առած, խորը կերպով համոզուած ենք, որ ոչ
թէ Առևտրական դպրոցի, այլ մեր գիւղատնտեսական
միջնակարգ դպրոցի աշակերտները միայն կարող են
քայլ առ քայլ տնտեսապէս նաճել Տաճկաստանը և
Պարսկաստանը, որտեղ երկիրը դեռ անմշակ է,
ընդարձակ և բարեբեր, իսկ գիւղատնտեսներ պակա-
սում են։

Ուրեմն այդ կողմից էլ մեր ցանկութիւնը անյու-
սալի է, և ուրեմն անհիմն էր նաև այն կարծիքը, թէ
Ալէքսանդրապոլը տնտեսապէս առաջադիմելու հաս-
տատուն հիմունքներ ունի, թէ նա պէտք է դառ-
նայ կենտրոնավաճառ տեղ և Առևտրական ընդար-
ձակ կապեր ունենալու է դրացի Տաճկաստանի կամ
Պարկաստանի հետ։

XI

Գալով պ. Գ. Բայենդուրեանի կտակի մասին, որի
գումարը որպէս թէ լինելու էր մօտ 200,000 ռուբ.
և այդ գումարով կարելի էր ընդարձակել դպրոցի
շէնքը, շատացնել ձրիավարժների թիւը, պակասե-
ցնել ուսման վճարը և այլն,—այդ բոլորը իհարկէ
դատարկ յոյսեր էին և վառ երևակայութեան ար-
դիւնք։ Այդպիսի բառեր հարկաւոր էին դարդարելու
պաշտօնական զեկուցումների էջերը և այդպիսի մե-
ծահնչիւն ճառերի շնորհիւ, ազդեցութիւն անել միա-
միտ քաղաքացիների երևակայութեան վրայ, այդ բո-
լորը իհարկէ, բացի վնասից ոչ մի օգուտ չէ բերել
քաղաքի տնտեսութեանը։

Ճշմարտութիւնը միայն այն է, որ Ալէքսան-
դրապոլի Առևտրական դպրոցը ստանում է պ. Բա-
յենդուրեանի կտակած մի կրպակից ամեն տարի
2000 ռ. (դուրս գալած ծախսերը 1700 ռ.) և այդ
գումարն էլ, խոստովանում ենք, որ պակաս օժան-
դակութիւն չէ մեր աղքատ քաղաքի համար։

Իսկ հասարակութեան մէջ տարածուած այն յոյ-
սը, թէ Ալէքսանդրապոլում Առևտրական դպրոց հաս-
տատելով քաղաքը բախտ ունենալու իր մէջ տեսնե-
լու մօտ 25 հոգի բարձրագոյն կրթութիւն ստացած
անհատներ, որոնք ծառայելով դպրոցին, միևնոյն
ժամանակ պէտք է լինէին մեր հասարակութեան հա-
մար լուսատու ջահեր,—այդ յոյսն էլ կարծում ենք,
որ դատարկ դուրս եկաւ։ Մեր քաղաքը այո, ամե-
ամենաբարձր ռոճիկներ տալով հրաւիրեց զանազան
կրթութեան տէր ուսուցիչներ, բայց այդ ուսուցիչների
մէջ քաղաքը չկարողացաւ տեսնել լուսատու ջահեր

լինելու յատկութիւնը, նոյն իսկ դպրոցական ասպարիզում։ Ինչպէս իր տեղում նկատել ենք, Առևտրական դպրոցի մանկավարժական խուրհուրդը շատ թոյլ կերպով է ըմբռնել հրապարակական դասախօսութիւնների ահագին և կրթիչ ազդեցութիւնը։ Ալեքսանդրապօլի Առևտրական դպրոցի ուսուցչական խումբը կարծում ենք, որ բարոյական պարտականութիւն ունէր հանդէս հանելու ոչ թէ միայն իր առևտրական գիտութիւններով օժտուած դպրոցաւարտները, այլ և բարոյապէս պարտաւոր էին գոնէ տարին մի անգամ հրապարակական հաշիւ և դասախօսութիւններ կարդալ մեր քաղաքացիներին առևտրի, արհեստի և արդիւնաբերական ճիւղերի նկատմամբ, այդ ճանապարհով մեր Առևտրական դպրոցի ուսուցիչները ուսումնասիրած կլինէին մեր տեղային տնտեսական կեանքը իր լաւ և վատ կողմերով, որպէսզի գիտակցաբար կատարէին իրանց կրթական առաքելութեան պաշտօնը։

Իսկ ծնողական խորհուրդներ կազմելու անհրաժեշտութեան մասին խօսելն անգամ աւելորդ է, մեր «զիտնական» ուսուցիչները, աշակերտի ծնողներին դպրոց հրաւիրում են միայն այն ժամանակ, երբ պէտք է փող պահանջեն կամ ծանր ու ծանր նկատողութիւն անեն աշակերտների ծուլութիւնների կամ այլ պակասութիւնների մասին, ուրիշ անգամ ծնողների երես տեսնելը աւելորդ են համարում։ Միւս կողմից մեր Առևտրական դպրոցի տնտեսագէտ ուսուցիչները այն կարծիքն են պաշտպանում, թէ Ալեքսանդրապօլը ահագին ռոճիկներ տալով ուսուցիչներին և պահելով իր մեծածախս Առևտրական դպրոցը, դեռ ևս մեծամեծ օգուտներ ունի այդ բանի մէջ, որովհետև փաստաբանում են թէ ուսուցիչների ստացած մեծ ռոճիկները և դրսից եկած աշակերտների կատարած ծախսերը պատճառ են լինում տեղական առևտրի կենդանութեանը. Ողորմելիները կարծում են թէ բոլորի ծնողները կամ քաղաքացիները մեծ շահ ունեն ուսուցիչներին մեծ ռոճիկներ տալու մէջ. կարծում են, թէ ուսուցիչների ծախսած փողերը տեղային մի քանի առևտրականների մօտ մնում են քաղաքում, չհասկանալով, որ բոլոր հարկաւոր կենսական պիտոյքները և այլ հարկաւորութիւնների մեծ մասը դրսից են ներմուծւում Ալեքսանդրապօլ։ Մեր քաղաքը, որ ունի այժմ իր երեք լրագրական հրատարակութիւնները,—բարոյական իրաւունք ունէր սպասելու իր կարող ուսուցիչներից գոնէ տեղային ժողովրդի համար մտաւոր և բարոյական անուն, հասարակութիւնը յոյս ունէր թէ այդ ուսուցչական կազմը իրանց խելքով և գրական աշխատութիւններով առաջնորդ կարող էին լինել տեղային բարոյական հասարակական կեանքին, բայց ցաւօք սրտի հասարկութիւնը այդ ուսուցիչների մէջ տեսաւ մի միայն դատարկութիւն։ Վերջի օրերս «Ախուրեան» և «Живое Слово» էջերը լցուում են Առևտրական դպրոցի ուսուցիչների և աշակերտների կեղտոտ բառակոյմերը միայն, որը աւելի ևս պղտորում է հասարկութեան միտքը այդ կրթուած մարդոց խակամարժանապատուութեան մասին*)։

Ուրեմն այդտեղ էլ ժողովրդի յուսախաբութիւնը կատարեալ է։

---

*) «Ախուրեանի» № տպած վիճակագրութիւնից երևում է, որ քաղաքային դրադարան ընթերցարանից օգտուողների էջ ամենավերջին տեղը բռնում են մեր զարգացած ուսուցիչները։

Բայց թողնենք այդ երկրորդական նշանակութիւն ունեցող հարցը և դառնանք տնտեսական դրութեանը, որը կապ ունի Առևտրական ուսումնարանի բանալու և պահելու խնդրի հետ։

XII

Ալէքսանդրապոլ քաղաքի ինքնախաբէութեան և անապատած յափշտակութեան հետևանքը և արդիւնքը այն եղաւ, որ կառավարչական բարձր հաստատութիւնները բոլորովին սխալ հասկացողութիւն կազմեցին մեր քաղաքի տնտեսական դրութեան մասին, համարելով Ալէքսանդրապոլ քաղաքը հարուստ և տնտեսական բարգաւաճման մէջ եղած մի քաղաք, որը կարող էր առանց պետական օգնութեան էլ բանալ և պահել իր միջնակարգ դպրոցը և այլ քաղաքային նախակրթարանները և հաստատութիւնները։

Ցաւալի և միանգամայն դատապարտելի է այն դրութիւնը, որ մինչև այսօր էլ ոչ մի լուրջ, ճմարիտ և իրական փաստերի վրայ հիմնուած աշխատութիւն չէ կատարած պարզելու մեր քաղաքի տնտեսական դրութեան իսկական պատկերը։ Մինչև այսօր էլ ոչ մի պաշտօնական դիմում կամ խնդիրչէ եղած բարձր կառավարութեան առաջ օգնելու մեր քաղաքի կրթական գործին և թեթևացնելու աղաքի հարկաւորութեան չափը.—ընդհակառակը, մեկ յայտնի է փաստեր, որ մեր քաղաքի տնտեսութիւնը վարող անհատները յարմար և անյարմար դէպքերում, միշտ աշխատել են քաղաքի տնտեսութիւնը ցոյց տալ զարգացեալ և ամենափայլուն դրութեան մէջ։ Որպէս օրինակ յիշենք, որ մեր նախկին քաղաքագլուխ Գ. Տէր-Պետրոսեան իր պաշտօնական զեկուցումի մէջ, ոգևորուած Առևտրական դպրոց բանալու անհրաժեշտութեան խնդրով, շեշտում է թէ Ալէքսանդրապոլ քաղաքը տնտեսական առաջադիմութեան հիմունքներ ունի և թէ նախքան ինքնավարութիւն ունենալը, նա ունէր տարեկան մուտք 47609 ռուբ. իսկ քաղաքային ինքնավարութիւն ստանալուց անմիջատէս յետոյ (1901 թ.) քաղաքային մուտքերը իսկոյն կրկնապատկուել են մինչև 92683 ռ. 24 կ., որ ասել է թէ քաղաքը փառաւորապէս կառավարելուց յետոյ էլ (75961 ռ. ծախս) տարեկան աւելորդ փող ունէր 16,728 ռ.*), իսկ այժմ 1910 թ, այդ մուտքերը արդէն բարձրացել են մինչև 156,611 ռ., որ ասել է թէ 10 տարուայ մէջ եռապատկուել է քաղաքի մուտքերը։ Եթէ այդ թուերը ընդունենք ճշմարիտ ինչպէս որ գրուում են պաշտօնական հաշիւների մէջ և ներկայացուում են բարձր իշխանութեանը, մենք պէտք է խոստովանենք, որ արդարև, մեր քաղաքը հիանալի տնտեսութիւն ունի և Ալէքսանդրապոլ քաղաքը բոլոր Անդրկովկասի քաղաքների մէջ միակ բացառութիւն կազմող բախտաւոր քաղաքն է։ Եւ հաւատացած ենք, որ այդ «անսխալ» հաշիւների հետևանքն էր, որ կառավարութիւնը ոչ մի կերպ չուզեց օգնել մեր քաղաքին իր Առևտրական միջնակարգ դպրոցը բանալու և պահելու գործի մէջ. կառավարութիւնը այժմ էլ չի կամենում շոշափելի կերպով օգնել քաղաքի կրթական հաստատութիւններին, պակասեցնել եղած հարկերը, իջեցնել առևտրական վկայագրերի վճարը, զոնէ Ղարս քաղաքի համեմատ (IV կարգի), այլ ընդհակառակը, թէ ինքը՝ կառավարութիւնը ամեն մի գործի մէջ և թէ զա-

*) Երես 15։

նագան բարեգործական և այլ հաստատութիւններ, ի նկատի առած անշուշտ մեր քաղաքի տնտեսական հրակայական առաջադիմութիւնը, դիմում են միշտ և անդադար նպաստներ ստանալու մաքով և մեր քաղաքային վարչութեան վարիչներն էլ միշտ սրամադիր են ընդառաջելու այդ բոլոր պահանջներին։

Այդ քաղաքականութեան հետևանքը այն եղաւ, որ մեր քաղաքը այս րոպէիս, ինչպէս նկատեցինք և այժմ էլ կրկին անդամ շեշտում ենք, կանգնած է 226, 838 ր. պարքի դէմ. ասլիս է տարեկան տոկոս մօտ 20,000 ր. և ծախսել իր յատուկ և անձեռնմխելի դրամագլխից և աւանդներից մի մասը, առանց իրաւասուների գիտութեան, 75,231 ր. արդէն գրաւ է դրել նոյն իսկ իր հռչակաւոր Առևտրական դպրոցի շէնքը և կարող է պատահել, որ մի գեղեցիկ օր պարտատէրերը ճանաչեն այդ նրա պարծանքի արժանի միակ առարկան*)։

Թողնելով մի այլ անդամ խօսելու այդ հակառակական հաշիւների և արտաքոյ կարգի անպատասխանատու տնտեսական վարչութեան մասին, երբ լիապէս աւարտած կլինի Նորընտիր քաղաքագլուխ պ. Գ. Կամսարականի ձեռնարկած քաղաքային վարչութեան գործերի վերաքննութեան գործը. առ այժմ մենք պէտք է ասենք, որ այդ գործի մէջ մեծ հանճարներ չկան. մեր քաղաքային վարչութեան հզօր անդամները նստած իրանց փառաւոր սալօն-կաբինէտի մէջ, առանց երկար մտածելու աշխատել են միշտ և հանապազ և այն էլ արհեստական կերպով բարձրացնելուն քաղաքի մուտքերը, ստեղծել նորանոր հարկեր և անարդար ծախսերի հաշիւներով ծանրացել է քաղաքի տնտեսութիւնը։ Հարկահանութեան այդ հարստահարչական սիստեմը, որ յատուկ է բոլոր անարդար կառավարութիւններին, ի հարկէ չէր կարող չազդել նաև մեր քաղաքի և քաղաքացիների տնտեսական դրութեան տկարանալուն։ Եթէ քննելու լինենք մեր քաղաքի վերջի 10 տարեայ ել ու մուտքի հաշիւները և համեմատենք այդ հաշիւները քաղաքի իսկական վճարողական կարողութեան հետ, մենք պէտք է համոզւենք, որ այս մուտքերը արհեստական կերպով մեծացած են, ելքերը իսկապէս տեղի են ունեցել, իսկ մուտքերը չեն զանձւել, որով բնականապէս բաց է մնացել մօտ 94000 ր. ապառիկնեերի մի կլորիկ հաշիւ։ Եւ այդ ծանր զոհաբերութիւնը կատարել է աւելի շատ Առևտրական դպրոց հիմնելու, այդ դպրոցի շէնքը կառուցանելու, այդ դպրոցի անհրաժեշտ առարկաների հոգալու, և նրա տարեկան ծախսը ծածկելու համար, սակաւ ուշադրութեան առնելով քաղաքի ուրիշ ծով կարիքները։ Այո, Առևտրական դպրոց հիմնելու գաղափարը մեծ մասամբ մղել է մեր քաղաքը դէպի տնտեսական քայքայում. այդ հաստատութեան անհրաժեշտութիւնն է եռապատիկ բարձրացրել քաղաքի հարկերի չափը և քանակութիւնը։ Որպէսզի մեր խօսքերը լոկ ենթադրութիւններ չլինեն, այստեղ պարտաւոր ենք մի թեթև համեմատութիւն դնել մեր քաղաքի ելք և մուտքի հաշիւներից, որպէսզի հասկանալի լինի եղած հարկերի մեծանալու չափը և նրա յարատև բարձրանալու պատճառները և հետևանքը։

---

*) Առևտրական դպրոցի շէնքը կառուցանելու համար որոշուած էր 75,734 ր., բայց ծախսել է մօտ 160,000 ր. և մինչև այսօր էլ հաշիւը չէ հրատարակուած։ Այդ շինութիւնը արդէն գրաւ է դրած Թիֆ. Ազ. բանկը 73 հազար բուբլու փոխարէն։

XIII

Սրանից տասն է հինգ տարի առաջ, երբ Ալէքսանդրապոլ քաղաքը տնտեսապէս կառավարւում էր դեպուտատների կանտորի ձեռքը, քաղաքի բոլոր մուտքերն էին 48000 ր., իսկ դեպուտատների կանտորի ծախսն էր մօտաւորապէս 2500 ր. մի քիչ աւել կամ պակաս։

Քաղաքացիները կամեցան ունենալ իրանց սեփական քաղաքային ինքնավարութիւնը և ազատուել պոլիցիականների անհաշիւ և անկօնտրոլ տիրապետութիւնից, բայց իրականութեան մէջ տարբերութիւնը շատ չնչին եղաւ, որովհետև քաղաքային վարչութեան մէջ լցուեցին նոյն պոլիցիայից հեռացուածները և արտաքսուածները, որոնք փոխեցին միմիայն իրանց հագուստը, իսկ գործավարութեան ձեր մնաց միևնոյնը*)։

Այժմ մեր քաղաքային վարչութեան ծախսն է միայն 25706 ր., իսկ քաղաքային տնտեսութիւնն է, որպէս թէ 150,000 ր.։ Ինչպէս երևում է այս հաշուից, քաղաքային գործավարութիւնը թէև շատացել է երեք անգամ, բայց վարչութեան համար եղած ծախսն էլ բարձրացել են տասը անգամ, թէև մեղ յայտնի է, որ քաղաքի ընդհանուր տնտեսական վիճակը համեմատած սրանից 15 տարի առաջ եղած դրութեան հետ, պակասել է չորս անգամ, իսկ կենսական պիտոյքները և հարկերը քաղաքացիների համար էլ բարձրացել են երեք անգամ։ Բայց խնդիրը

*) Նախկին պրիստաւ պ. Տէր-Սահակեանը, յետոյ քաղաքային վարչութեան պաշտօնեայ, կեղծ անդորրագրով բաւականին խոշոր փող կորզել է մեր քաղաքացիներից և փախել. մի քանիսն էլ ուրիշ գործեր են արել։

այն է, թէ որքան շահեց քաղաքը այդ վարչական բարեփոխութեան մէջ։

Առայժմ հրապարակապէս յայտնի է դարձել, որ մեր քաղաքային վարչութեան մէջ օրինակելի գործավարութիւն, խելացի տնտեսութիւն, հաշիւ և հրապարակայնութիւն չկայ, պաշտօնական թղթերի եղծելն ու կեղծելը մի տեսակ հիւանդութիւն է դարձել։ Առաջիկայ վերաքննութիւնը գուցէ հրապարակ հանէ այնպիսի բազմաթիւ դէպքեր, կորած անդորրագրերի և կորած պայմանների զանազան ձևեր, որոնք անյայտացել են մեծ ու փոքր կապոցներով...—Տես «Живое Слово» № 11—1911 г.

Վարչական և տնտեսական այդ անբնական դրութիւնը բացատրելու համար պէտք է յիշենք, որ մօտիկ տարիների կեղծ ազատագրական շարժումը այն աստիճան վարակել էր նաև մեր քաղաքային վարչութեան անդամներին և ծառայողներին, որոնք ամենայն ժրաջանութեամբ շահագործեցին քիչ աշխատելու, լաւ ապրելու և տիրողաբար հրամայելու բոլոր սկզբունքները։ Այդ գաղափարների ազդեցութեան տակ, անսպասելի կերպով շատացան թէ ծառայողների թիւը և թէ նրանց ռոճիկները*), որը միանգամայն շատ բարձր է Ալէքսանդրապոլի այժմու կարողութեան համար։ Ամեն մի պաշտօնեայ փաշայական դիրքով, ունի իր օգնականները և գրագիրները, որոնց շատութիւնը ոչ թէ միայն խանգարում է կանոնաւոր գործավարութեան ընթացքը, այլ և քաղաքային հաստատութիւնը մօտեցնում է մի անկելանոցի**)։

*) 1898 թ. քաղաքային վարչութեան ծախսն էր 13153 թ. ուրեմն 12 տարուան մէջ կրկնապատկւել է այդ ծախը։

**) Մօտ օրերս միայն յայտնի եղաւ, որ քաղաքային

Մի քանի անգամ փորձեր են եղել ֆինանսական մասնաժողովի ձեռօք կրճատել—չափաւորել եղած պաշտօնների թիւը, բայց ամեն անգամ էլ խիստ հակառակութիւն է առաջ եկել քաղաքային վարչութեան և խորհրդի մէջ։ Քաղաքային վարչութիւնը ոչ մի կերպ ցանկութիւն չէ ունեցել յետ մնալ մեծ քաղաքներին յատուկ շատ պահելու մրցքից, չի կամեցել զրկել իր մի որևէ անդամին շահաւէտ պաշտօնից և այդ իսկ պատճառով պահում է շատ ու շատ երկրորդական և երրորդական նշանակութիւն ունեցող պաշտօններ և պաշտօնեաներ, որոնց կատարած ծառայութիւնը, համեմատած պետական հաստատութիւնների հետ (ինչպէս օրինակ՝ փոստ-հեռագրական և բանկային հաստատութիւնների հետ), բոլորովին թեթև է և շատ մեծ վարձատրութեան մէջ հաստատուած։ Մի քանի ազդեցիկ և արտօնեալ քաղաքացիներ էլ ժառանգաբար տիրապետել են քաղաքային տնտեսական կառավարութեան գործերը, մի քանիսն էլ զեղեցիկ համերաշխութեամբ շրջապատել են քաղաքային վարչութեան խորհուրդը և ձեռք են բերել քաղաքային հասոյթների շահագործութիւնը, որը անմիջապէս, որը բարեկամ-ազգական ընկերների շնորհիւ և այդ իսկ պատճառով միշտ արգելք են հանդիսանում քաղաքային ծախսերի չափաւորելուն, կրճատելուն, և անդադար աշխատում են

վարչութեան հարկահաւաք Եգոր Յովհաննէսեանը կեղծ կըտրոններով իւրացրել է քաղաքային հարկերից մօտ 3 հազար ռուբլի և անյայտացել. այդ բանը կատարուել է տարիների ընթացքում, քաղաքային վարչութեան հաշուապահների քթի տակ. քաղաքային խորհուրդը 22-ն մարտի 1911 թ. վճռեց դատաստանական պատասխանատուութեան ենթարկել վարչութեան կազմը։

մուտքերի մեծանալուն և շատանալուն։ Ցիշենք այդ մուտքերից մի քանիսը, ինչպէս օրինակ՝ որպէսզի հասկանալի լինի մեր քաղաքի մուտքերի հետզհետէ բարձրանալու թէ կամայական լինելը, թէ ծանրութեան չափը և թէ արհեստական կերպով բարձրանալու իսկական նպատակը։

Ա. Ալէքսանդրապոլի բոլոր անշարժ կայքերը 1898 թ. ցուցակագրութեան և ապա հետզհետէ նոր գնահատութեան համեմատ հասնում են 4,178,720 ռուբլի։ Քաղաքային վարչութիւնը առնում է այժմ յօգուտ քաղաքի այդ կայքերից 10%, այն է 31500 ռուբ. դուրս հանած քիչ արժէք ունեցող տները. բայց պէտք է յիշել, որ Ալէքսանդրապոլի անշարժ կայքերը նախքան քաղաքային վարչութիւն հաստատելը, երբ կալուածքները աւելի զին և արժէք ունէին, քան այժմ, քաղաքը ստանում էր 6% և ազատ էր հարկը ուշացնելու համար սահմանած տուգանքից։ Երևանի նահանգապետի օգնական պ. Զեխովսկու տիպմամբ քաղաքացիները համաձայն եղան բարձրացնելու այդ հարկը, որպէսզի քաղաքային ինքնավարութիւն ստանան և քաղաքային վարչութիւնն էլ ապագայում նոր աղբիւրներ գտնելով կարող լինի իջեցնել նախկին դրութեանը։ Բայց քաղաքային վարչութիւնը մինչև այսօր էլ ահագին բողոքների դէմ ոչ թէ միայն արամադիր չէ իջեցնելու այդ հարկերը, այլ և բոլորովին անարդար կերպով կրճատեց նոր տուն շինողներին 6 տարի հարկից ազատ լինելու թեթևութիւնից և որպէս պատիժ սահմանեց մի նոր հարկ ևս (пеня) ուշացած հարկի վերայ 12%։

Այդ անխիղճ հարկը ծանրանում է աւելի շատ չունևոր տնատէրերի վրայ և կրկնապատկւում է

շատ անգամ նոյն իսկ տան վրայ եղած հարկը։ Իսկ նոր տուն շինելը, նոր տան համար հող գնելը քաղաքից, արդէն կատարեալ պատուհաս է դարձել քաղաքացիների համար։

Քաղաքային վարչութիւնը կարծես թէ ուխտել է միանգամից կործանել տնատէրերի տնտեսական կարողութիւնը և զանազան ներելի ու աններելի միջոցներով աշխատում է արգելք դառնալ, դժուարութիւններ ստեղծել այն քաղաքացիների դէմ, որոնք տարիների ընթացքում դառն աշխատութեան միջոցով հաւաքել են մի քանի բուբլիներ և կամենում են պատսպարել իրանց ընտանիքը տուն շինելով, որը քաղաքի շահի տեսակէտից միանգամայն օգտակար է և կազմում է նրա մուտքերի աճման առաջին և մի որոշ ու հաստատուն աղբիւրը։ Քաղաքային վարչութեան այդ հալածանքին ենթակայ են ոչ միայն եկւոր դրսեցի մարդիկ, այլ և ընիկ հաստատուն քաղաքաբնակները, որոնք 80 տարի քաղաքին հարկեր տալուց յետոյ էլ, չեն կարող մի կտոր հող ձեռք բերել բնակութեան համար։ Այն հողաբաժինները, որոնք պօլիցիայի վարչութեան ժամանակ գնահատւում էր 10, 25 և 50 կոպ., իսկ մօտիկ ժամանակներս, քաղաքի աւելի յաջող ժամանակը, գենեբալ Պրասկուբեակովի կամիսիայի ձեռօք գնահատած էր 30, 50 կոպէկից մինչև 1 բուբլի, այժմ այդ հողաբաժինները բոլորովին անհասկանալի պատճառով և բնութեամբ գնահատում են 3, 5 և 10 բուբլի մի քառակուսի սաժէնը։ Քաղաքային վարչութիւնը ինքը իրանից շատ բարձր գին նշանակել է այս կամ այն թաղի և հողաբաժինի համար և ապա աճրդախօսութեամբ կուեցնում է քաղաքացիներին, առաւել ևս բարձրացնելու շինութեան հողերի գները։ Այդ

պատճառով շատ քաղաքացիներ ստիպւած են հեռու մնալ քաղաքի հետ հողային գործ ունենալուց և աւելի ձեռնտու են համարում գնել քաղաքից հեռացող քաղաքացիների շինած տները և կամ հնուց պատսպարած հողերը։ Արդէն զգալի է, որ հետզհետէ քաղաքում նոր հող առնելու և տուն շինելու գործը զգալի կերպով դադարում է։ Քաղաքի մեծանալուն և բնական շինարարական գործի ընթացքին մեծ վնաս է բերում նաև այն ծանր և անխիղճ կարգադրութիւնը, որով քաղ. վարչութիւնը ստորագրութեամբ պարտաւորութիւն է դնում հող ստացող քաղաքացիներին երեք տարւայ ընթացքում անպատճառ շինել ստացած հողամասի մի երրորդական մասը։ Հակառակ դէպքում քաղաքային վարչութիւնը յետ է խլում քաղաքացու գնած հողը, նոր տարեկան տուրք է նշանակում սաժէնին 10 կոպ., որ ասել է թէ հողատէրը պարտաւոր է ոչ թէ միայն շինել, հողի արժէքը տալ, այլև մի նոր հարկ էլ վերան աւելացնել, որ տարեկան հասնում է երբեմն 20, 30, 50 և աւելի, որը քայքայում է խեղճ քաղաքացիների տնտեսութիւնը։ Ահա այդպիսի խեղճ քաղաքացիների դէմ դատ վարելու համար է, որ վարչութիւնը հազարներ ռոճիկ տալով պահում է մի փաստաբան, որը անցեալ տարի 650 անխիղճ և անարդար գործ է վարել քաղաքացիներին հարստահարելու համար և որպէս պարգև քաղաքային վարչութիւնից էլ ստացել է, նաև մի կլասիկ, շատ առատ վարձատրութիւն։ Քանիցս անգամ խնդիր է եղել պակասեցնել անշարժ կայքերի հարկը էժանացնել տան շինութեան հողերի արժէքը, բայց քաղաքային վարչութիւնը միշտ ցոյց է տուել իր անյատակ հաշիւը և ահագին ծախսերի չափը և մերժել է քաղաքացիների արդար պահանջը։

Բ. Հարկերի մի այդպիսի անխիղճ բարձրացում տեղի է ունեցել նաև քաղաքապատկան վարելահողերի հետ, որը ներկայացնում է քաղաքի խոշոր և հաստատուն մուքերից մէկը։ Քաղաքը ունի մօտ 3000 դեսեատին վարելահողեր, որը առաջ տրւում էր քաղաքաբնակ երկրագործներին դեսեատինը 60 կոպեկից մինչև 1 ռուբլի։ Քաղաքային վարչութիւնը ճարդախօսութիւնների և մրցութիւնների շնորհիւ բարձրացել է այժմ դեսեատինը 7 ռ. 10 ռ. և տեղ-տեղ մինչև 15 ռ.։ Քաղաքաբնակ երկրագործ դասը ուրիշ ոչ մի պարապմունք չունենալու պատճառով ստիպուած է ճարահատեալ բարձրացնել այդ հողերի տարեկան վճարը և հնար ու միջոց չունենալով հանգստացնել կամ պարարտել հողը, շարունակ հարստահարում է երկրի պտղաբերութեան ոյժը, որպէսզի կարողանայ վճարել սոսկալի հարկերը։ Բայց և այնպէս, հողի ուժասպառութեան շնորհիւ շահագործումը այլևս դադարել է. հողագործներից շատերը չեն կարող վճարել այդ ծանր հարկերը, կէսն են վճարում և քաղաքը ստիպուած է այդպիսիների դէմ շարունակ դատ բանալ, որը իհարկէ մեծ վնաս է թէ քաղաքի և թէ քաղաքացիների համար։

Միայն մօտ օրերս քաղաքային վարչութիւնը նոր է հասկացել մշակութեան այդ կործանիչ քաղաքականութիւնը և վճռել է հրաւիրել մասնագէտ գիւղատնտես, որը քաղաքային գիւղատնտեսական մասնաժողովի ձեռօք պէտք է խելացի մշակութեան ձև մտցնէ այդ քաղաքապատկան հողերի մէջ և արդար գնահատութիւն հատատէ աշխատաւոր դասի համար։

Գ. Քաղաքացիներից շատերը, քաղաքի հէնց նոր հիմնարկութեան օրից տիրապետել էին քաղաքի շրջականերում զանազան տեղեր, բանջարանոցներ էին

շինել և քաղաքին էլ տալիս էին որոշ հողային հարկ, որովհետև այդ հողերը մտցրած էր քաղաքային յատակագծի մէջ, որպէս քաղաքապատկան հողեր։ Մեր քաղաքային վարչութիւնը առանց երկար մտածելու, նահանգապետի հրամանով գրաւեց այդ հողերը և քաղաքապատկան սեփականութիւն, սկսեց աճուրդով տալ ցանկացողներին տասնապատիկ բարձր վճարով։ Այդ անարդար յափշտակութեան գործից առաջ եկաւ ահագին դատաստանական գործ քաղաքի և հողատէրերի մէջ, որը քայքայեց թէ քաղաքի և թէ քաղաքացիների կարողութիւնը։ Ի վերջոյ Երևանի նահանգական ատեանի վճռահատութեամբ այդ հողերից շատերը ճանաչուեցաւ քաղաքացիների սեփականութիւն, իսկ փոքր մասը մնաց քաղաքին, որը այժմ ամբողջովին խօսութեամբ այնպիսի սոսկալի գներով է տրւում, որ մշակ դասը տարին ամբողջովին չարչարուելուց յետոյ էլ, եթէ ազատուած լինի ցրտահարութիւնից և կարկտից շատ անգամ հազիւ կարողանում են տալ տարեկան հարկը։ Այդպիսի արհեստական կերպով եռապատիկ բարձրացել է քարահանքը, քաղաքապատկան կրպակների վճարը, սպանդանոցի և քաղաքային այլ և այլ մուտքերը, որոնք հզօր կերպով ճնշում են քաղաքացիների տնտեսական կեանքը։

Դ. Քաղաքային վարչութեան ստեղծած մի նոր հարկի կամ մուտքի աղբիւրը էլ, անասունները վաճառելու հրապարակի հարկն է, որը թէև տալիս էր երբեմն քաղաքին մօտ 12,000 ռ. եկամուտ, բայց անարդար գործադրութեան շնորհիւ դարձել է հարստահարութեան մի սոսկալի միջոց*) խեղճ գիւղական

*) Այն աստիճան անխիղճ է այդ հարկը, որ այս տարի 5 անգամ աճուրդի են դրել այդ մուտքը, բայց ոչ մի մարդ չէ կամեցել վեր առնել հարստահարութեան այդ գործը։

դասի դէմ։ Քաղաքային վարչութեան սահմանած այդ օրէնքի հիման վրայ, գիւղացին պարտաւոր է իր ծախու անասունները բերել քաղաքային հրապարակը և միայն այդ նշանակած տեղը վաճառել և վճարել որոշ տուրք անասուններից։ Այդ բռնութեան գործը այնպիսի անխիղճ հարստահարութեան ճանապարհ բացեց ենիչարի կապալառուների համար, որոնք ահագին փող տալով քաղաքին, ստիպւած էին անարդար ճանապարհով և անլուր յանցանքներ կատարելով կրկնակի գումարը քամել գիւղացիներից, հարկի ենթարկելով ոչ թէ միայն գիւղացու ծախած անասունները, այլ և լծկան եզները, ամարանոց գընացողների կովերն ու ոչխարները ճիշտ բարբարոսական միջոցներով։ Եւ Ալէքսանդրապոլի գաւառի գիւղական դասը չկարողանալով այլ ևս տանել այդ անխիղճ կապալառուների հարստահարութիւնները, ծեծը, զրկանքը և հայհոյութիւնները, ստիպւած եղան իրենց անասունները վաճառել կամ գիւղում կամ յանձնել զանազան չարչիներին Թիֆլիս և Բաքու արտահանելու համար, որով սոսկալի կերպով տուժեց քաղաքը թէ առևտուրի և թէ մսի թանկութեան պատճառով։

Վերոյիշեալ մի քանի փաստերն էլ բաւական են մեզ համոզելու, որ Ալէքսանդրապոլ քաղաքի մուտքերի աճումը տեղի է ունեցել ոչ թէ բնական տընտեսական յարատև և հաստատուն աճման ճանապարհով, այլ բռնութեամբ և կամայականութեամբ, որը իհարկէ քայքայելու էր ժողովրդի տնտեսական կարողութիւնը, ի վերջոյ 90,000 ռուբ. ապառիկների հաշիւներ թողնելով քաղաքին։ Եւ այդ բոլորը լոկ անափառ մեծամտութեան համար, որպէսզի մեր քաղաքային վարչութեան գործիչները հնար ունենային

ցոյց տալու բարձրագոյն իշխանութեանը, թէ քաղաքի տնտեսական դրութիւնը շարունակ աճման և բարգաւաճման մէջ է թէ Ալէքսանդրապոլը որպէս հարուստ վաճառաշահ քաղաք, անհրաժեշտօրէն պէտք ունի Առևտրական դպրոց հիմնելու նրա հոյակապ շէնք շինելու և պահելու և այդ գործը կարող է անել քաղաքը նոյն իսկ առանց կառավարութեան օժանդակութեան*)։ Իսկ քաղաքային ծախսերի շատութեան, շռայլութեան ալան-թալանի և աննպատակ լինելու մասին այստեղ ոչ մի բան չենք ասելու, որովհետև հասկանալի է, որ եթէ կայ մուտք, ելքերը իսկոյն առաջ են գալիս, որտեղ կայ դիակ, արծիւները անպակաս են։ Եւ մեր նպատակն էլ չէր քննել քաղաքի ել ու մուտքը, այլ պարզապէս ցոյց տալ այն արհեստականացրած թւերի խախուտ լինելու հիմունքները, որի հիման վրայ կառուցւած էր Ալէքսանդրապոլի հարստութեան գաղափարը և Առևտրական դպրոց բանալու մեծ ծրագիրը։

XIV

Ալէքսանդրապոլցիներից շատ շատերը և նոյնիսկ օտար քաղաքացի բարեմիտ անձինք արդէն հասկացել և հասկանում են Ալէքսանդրապոլ քաղաքի տընտեսական ներկայ դրութեան լուրջ տկարութիւնը և կարեկցաբար առաջարկում են զանազան միջոցներ բարելաւելու թէ քաղաքի և թէ գաւառի տնտեսական դրութիւնը, որը իրաւի ճգնաժամի մէջ է։ Սակայն ամեն մարդ իր հասկացածի համեմատ միջոցներ է առաջարկում, որպէս նպատակայարմար և գործնա-

*) «Ախուրեան» № 74—1910 թ.

կան օգնութեան ճանապարհ։ Բազմաթիւ լրագրական յօդուածներով, դասախօսութիւնների միջոցով առաջարկում են զարգացնել տեղային գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղը, խօսում են ջրաբաշխութեան գործ առաջացնել, հաստատել փորձնական դաշտեր և գաւառի միակ տնտեսական ոյժը երկրագործութիւնը առաջադիմութեան մէջ դնել և այլն։ Քաղաքային վարչութիւնն էլ հաստատել է իր յատուկ գիւղատնտեսական մասնաժողովը և ունի իր օրինակելի ագարակը, իսկ գաւառի համար կազմուած է Կովկասի հայոց գիւղատնտեսական և տնայնագործական ընկերութեան տեղային ճիւղը, որի նպատակն է օգնել գաւառի գիւղացիութեանը։ Մենք հոգով չափ ուրախ ենք, որ Ալէքսանդրապոլ գաւառի տնտեսական բարեփոխութեան հարցը մտել է իր բնական հետաքրքրութեան և գործնական ճանապարհի մէջ։ Բայց հիմնուած տեղային պայմանների և գործնական փորձառութեան վրայ, տարակոյս ենք յայտնում թէ այդպիսի մասնաժողովները և ընկերութիւնները կարող լինեն և ձեռնհաս օգնելու մի ամբողջ քաղաքի և գաւառի տնտեսական բարեփոխութեանը։

Նպատակի մեծութեան և ծով կարիքի հանդէպ բնականապէս անզօր են այդ մի քանի վաճառականներից, ուսուցիչներից, պաշտօնեաներից և կալուածատէրերից պատահաբար կազմած ընկերութիւնները, որոնք իրանց անդամակցական վճարը տալուց յետոյ անշուշտ պէտք է թողնեն ու գնան իրանց պաշտօնին, այդ փափուկ մնած մարդկանցից և ոչ մէկը չի կարող գնալ Շիրակի տաքուր գիւղերը, ամիսներով և շաբաթներով ապրել խորթ և անյարմար կեանքի մէջ և անպատրաստ գիտութեամբ, առաջնորդ

հանդիսանալ գիւղացու տնտեսական կեանքին։ Թող հաւաքուեն շատ ու շատ ժողովներ, հետաքրքրուեն, պարզեն գիւղացիութեան ցաւերը,—այդ բոլորը շատ ու շատ ցանկալի հետևանքներ կարող են ունենալ։ բայց մեր գաւառի և հետևապէս քաղաքի տնտեսական փրկութիւնը կախուած է ոչ թէ մի քանի տասնեակ զանազան կրթութեան, հասկացողութեան և տարբեր ուղղութեան մարդկանցից, այլ մի սեփական մշիջնակարգ գիւղատնտեսական դպրոցից, որից հետոյ հեռ դուրս գալած քաղաքացի և գիւղացի երիտասարդները կարող են տարիների ընթացքում բարեփոխել մեր տնտեսական կեանքը։ Միմիայն մեր գաւառի գիւղատնտեսական մշիջնակարգ դպրոցը, եթէ երբևիցէ Ալէքսանդրապոլ գաւառը բախտ ունենայ իր մէջ հաստատ տեսնելու, կարող է բարեփոխել մեր տնտեսութիւնը։ Այժմ ամենայարմար ժամանակն է, որ մեր գաւառական և քաղաքային վարչութիւնները միասին մի լուրջ և բազմակողմանի քննութեան վրայ հիմնուած ծրագրով, դիմեն կառավարութեան հիմնելու գիւղատնտեսական մի մշիջնակարգ դպրոց Ալէքսանդրապոլում, որը 200,000 հոգի ունեցող մի գաւառի և 30,000 բնակչութիւն ունեցող քաղաքի համար էական պահանջ է, որովհետև մի ամբողջ գաւառի տնտեսական կործանման խնդիրը ամենից առաջ պետական մեծ նշանակութիւն ունեցող մի խնդիր է։

Ինչպէս որ ամեն մի հիմնարկութիւն ունի իր յատուկ կանոնադրութիւնը, ծրագիրը և որոշ ուղղութեամբ դիմում է մի նպատակի, այնպէս էլ գիւղատնտեսական մշիջնակարգ դպրոցը միայն կարող է լինել մի յարատև և մշտավառ հնոց երկրի տնտեսական կեանքի մէջ ջերմութիւն և կեանք առաջացնելու համար։

Այո՛, գիւղատնտեսական միջնակարգ դպրոցը միայն կարող է և ձեռնհաս իր հաստատուն և մշտական հոգաբարձութեան ձեռօք, փորձառու և մասնագէտ ուսուցիչների առաջնորդութեամբ և տեղային ոյժերի մասնակցութեամբ կատարել այն տնտեսական բարեփոխութիւնը, որը անհրաժեշտ է մեր տնտեսական կեանքի պահանջին բաւականութիւն տալու համար։ Որ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցը միայն կարող է դէպի ինքը գրաւել գաւառի երիտասարդութիւնը, կրթել նրան մտաւոր և ֆիզիքական կարողութեան մէջ և որպէս պատրաստուած ոյժեր, վերադարձնել դէպի գիւղացիութիւնը այդ մեր տնտեսական կեանքի բարեփոխութեան առաջնորդները,—այդ բանը բոլորովին կասկածից դուրս է, այդ միակ և փրկարար ճանապարհով են ընթացել այն բոլոր ազգերը և ժողովուրդները, որոնք հասկացել են ընութեան անբաւ հարստութիւնից իրանց բաժինը ստանալ խելացի և հաստատուն ճանապարհով։

Գուցէ Ալէքսանդրապոլցիներից շատերը կարծիք ունենան թէ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցը ուսման և գիտութեան ծաւալով անբաւարար է կամ ստոր առևտրական կամ բէալական դպրոցից, այդպիսիների կարծիքը սխալ է և փարատելու համար պատի յիշենք, որ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցները հաստատուած են 1888 թ. բէալական միջնակարգ դպրոցների ծրագրի և 1889 թ. սեպտեմբերի 27-ին հաստատուած կանոնադրութեան համաձայն ունեն վեց դասարանական կազմ, որը բացի ընդհանուր միջնակարգ կրթութիւնից ունի նաև այն առաւելութիւնը, որ տնտեսական և գործնական կրթութեան ձեռօք պատրաստում է աշխատանքի ընդունակ աշակերտներ։ Ահա այդ տեսակ դպրոցների կանոնադրութիւնը և ծրագիրը.—Կրօն, Ռուսաց լեզու, Գերմաներէն, Աշխարհագրութիւն գիւղատնտեսական և արդիւնաբերական տեսութեամբ, Ընդհանուր և ռուսաց պատմութիւն, Գծագրութիւն, Թւաբանութիւն, Երկրաչափութիւն, Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Ֆիզիկա և օդերևոյթաբանութիւն, Քիմիա, Գիւղական շինարարական գիտութիւն, Անատոմաբուժութիւն, Գիւղատնտեսական հաշուէգիտութիւն և Գիւղատնտեսական օրէնսգիտութիւն։ Այդ տիպի դպրոցները նախակրթարաններ չունեն. ընդունւում են աշակերտներ առանց կրօնի և ազգի խտրութեան տասներկու տարեկանից և վեց տարի շարունակ կրթելով տեսական և գործնական գիտութիւնների մէջ, պատրաստում են քաղաքացիներ, բոլոր միջնակարգ (բէալական գիմնազիական) դպրոցական յատուկ իրաւունքներով ու արտօնութիւններով։ Ընթերցողներին խորհուրդ ենք տալիս համեմատել մեր Առևտրական դպրոցի կանոնադրութիւնը և ծրագիրը այդ դպրոցի հետ*), ձեռք

*) Իսկ Առևտրական դպրոցի ծրագիրն է.—Կրօն, Ռուսաց լեզու և գրականութիւն, Գերմաներէն, Գաղիական և Անգլիական լեզուներ, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թւաբանութիւն, Բնագիտական պատմութիւն, Ֆիզիկա, Առևտրական Թւաբանութիւն, Հաշուապահութիւն և առևտրական Թղթակցութիւն, Քաղաքատնտեսագիտութիւն, Առևտրական օրէնսդրութիւն, Քիմիա և առարկայագիտութիւն, Առևտրական աշխարհագիտութիւն, Սղագրութիւն, Գծագրութիւն և Մարմնամարզութիւն։

Այդ ծրագիրը արդէն ցոյց է տալիս թէ որքան Առևտրական դպրոցի ուղղութիւնը բարդ է և կապած աւելի մեծ չափով խոշոր արդիւնաբերական և վաճառականական ուղղութեան հետ, որը մեր աղքատ քաղաքի և գաւառի մէջ գործադրութեան հող չի կարող գտնել երբէք։

բերել և կարդալ որպէս օրինակ Ներսէսի համայնական գիւղատնտեսական, Ումսկի երկրագործական և այգեգործական դպրոցների կամ Մոսկուայի երկրագործական—գիւղատնտեսական դպրոցի կանոնադրութիւնը և դպրոցական հաշիւները, որի բաղմակողմանի և գործնական օգտաւէտութիւնը միանգամայն, հրապուրիչ են և սքանչելի։*) Այդ հաշիւներից մենք տեսնում ենք, որ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցը, ենթարկւած տեսական և գործնական գիտութիւնների հզօր ազդեցութեանը, ընդհանուր միջնակարգ կրթութեան հետ, աշակերտութեանը առաջնորդում է դէպի դաշտային—ագարակային աշխատանքը դէպի բնութեան անբաւ ուսումնասիրութեան գործը, դէպի կեանքի էական գիտելիքները։

Այդ ճանապարհով դպրոցը հետզհետէ ներշնչում է աշակերտութեանը սէր դէպի հողը, հայրենիքը և արդար աշխատանքի միջոցաւ—դէպի մարդավայել ապրուստի միակ եղանակը։ Երկրագործութեան արհեստի կատարելագործութեան հետ զուգընթացաբար առաջ է գալիս անասնապահութեան, այգեգործութեան, խոտերի մշակման, կաթնատնտեսութեան, մեղուաբուծութեան, բանջարագործութեան և այլ գիւղատնտեսական ճիւղերի համերաշխ—յարակից գիտութիւնների ընդարձակ տեսութեան շրջանը, որոնց ընդհանուր և էական նշանակութիւնը այն է՝ որ գիտակցաբար, աշխատանքի միջոցաւ, կարելի է կատարելագործել բնութեան առատութիւնը և խելացի տեսութեան շնորհիւ շատ արդիւնք ստանալ քիչ հողից, մարդավայել ապրելու և յարատև յառաջադիմութեան մէջ լինելու համար։ Ահա այդ տեսակ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի գոյութիւնն է, որ պէտք է ամենասպէս ապահովէ մեր գաւառի գիւղատնտեսութեան կեանքը, արդելէ գաղթականութիւնը և ազատէ գաւառաքաղաքը անխուսափելի տնտեսական կորստից։ Այդ կենսականխուսափելի տնտեսական կորստից պէտք է լինի մեր ընդհանուր մտածմունքների և գործունէութեան գլխաւոր առարկան։

XV.

Հաւատացած ենք որ Ալէքսանդրապոլի բոլոր ժողովուրդը, որը յայտնի է ջերմեռանդ նախանձախնդրութեան մէջ դէպի կրթական գործը—հոգով չափ ցանկալի է համարում ունենալ և պահել թէ մի յատուկ գիւղատնտեսական միջնակարգ դպրոց, և թէ իւր առևտրական դպրոցը և այլ ուրիշ կրթական հաստատութիւններ, եթէ ծերունական լինէր նիւթական միջոցներ հայհայթել այդ կրթական հաստատութիւններին։ Անչափ ուրախ կլինէինք որ մի յատուկ մասնաժողով քննէր և փաստերի վրայ հիմնւած յայտնէր եթէ առայժմ հնարաւորութիւն չկայ բանալ և հաստատել գիւղատնտեսական մի նոր միջնակարգ դպրոց — պետական աջակցութեամբ, ապա էական անհրաժեշտութիւնը ստիպում է դիմել մի այլ ամենայարմար և կարելի եղած միջոցի այն է, առևտրական դպրոցը վերածել միջնակարգ գիւղատնտեսական դպրոցի կամ գիւղատնտեսական գիտութիւնը

*) Ցանկացողներին խնդրում ենք դիմել քաղաքային գրադարանը ծանօթանալու այդ նիւթի վերաբերող տեղեկութիւնների հետ, որը ստացել ենք զանազան վարչութիւններից և յանձնել գրադարանին։

ներմուծել առևտրական դպրոց։ Այդ ընդհանուր ցանկութիւնը արտայայտեցաւ 1906 թ. նոյ. 21-ի առևտրական դպրոցի հոգաբարձութեան մանկավարժական և ծնողական ընդհանուր ժողովի մէջ և յետագայ հանգամանքները առաւել ևս պարզեցին այդ էական նշանակութիւն ունեցող խնդրի կարևորութիւնը։ Բայց խնդիրը այն է թէ կարելի՞ է արդեօք գիւղատնտեսական գիտութիւնները ներմուծել Ա-լէքսանդրապոլի առևտրական դպրոցը, կամ կարելի՞ է արդեօք Ալէքսանդրապոլի առևտրական դպրոցը վերածել գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի— ահա այդ երկու գլխաւոր հարցերը են որոնք արժանի են լուրջ քննադատութեան, ուսումնասիրութեան և գործնական կեանքի մէջ իրականացման միջոցների մասին մտածելու։ Ինչպէս յայտնի է Ռուսաստանում այժմ հետզհետէ շատանում են միջնակարգ գիւղատնտեսական դպրոցների թիւը և այնպիսի միջնակարգ դպրոցների թիւը, որոնք ունեն գիւղատնտեսական բաժանմունք։ Կառավարութիւնը ինքը աշխատում է այդ ուղղութեամբ, յայտնի մասնագէտ մանկավարժներն ու գիւղատնտեսներն էլ համաձայն են այն սկզբունքին թէ կարելի է բէալական ընդհանուր ծրագիրը պահելով հանդերձ—աշակերտութեանը սովորեցնել նաև գիւղատնտեսական գիտելիքները։ Ուրեմն երբ այդպիսի դպրոցներ արդէն կան, գործում են, և հիանալի կերպով, պէտք է ընդունել որ կեանքը, իրական պահանջն է առաջ բերել այդ տիպի դպրոցները և այդպիսիների և հետզհետէ բազմանալը արդէն ապացոյց է որ կարելի է և հնարաւոր բէալական միջնակարգ կրթութեան հետ սովորեցնել նաև գիւղատնտեսական գիտութիւնը—առանց ծանրաբեռնելու աշակերտի ֆի-

զիքական և մտաւոր կարողութիւնը։ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Ռուդոլֆը որը դպրոցական կրթական գործի մէջ համարւում է հեղինակաւոր անձն—մօտ օրերս ծրագիր է կազմել Սուխումի բէալական դպրոցը վերածել ութդասեան գիւղատնտեսական դպրոցի—անշուշտ կարելի և օգտաւէտ համարելով այդ բարեփոխութեան գործը, որը մատչելի և նպաստաւոր է նաև աշակերտութեան մտաւոր և ֆիզիքական կարողութեանը։ Ուրեմն այն ցանկալի բարեփոխութիւնը, ինչ որ զգացել և կատարում են զանազան բէալական դպրոցների վարչութիւնները—պէտք է օրինակելի լինի նաև մեզ համար, քանի որ մեր քաղաքը և գաւառը ամենից շատ պէտք ունի այդպիսի բարեփոխութեանը։ Մեր առևտրական դպրոցի կանոնադրութեան 5-րդ յօդուածը արդէն նախատեսել է այդ բարեփոխութեան ուղին, որով հարկաւոր դէպքում, կարելի է դպրոցի կանոնադրութեան մէջ մացնել այնպիսի առարկաների դասաւանդութիւնը, որը անհրաժեշտ է նկատւում տեղական պահանջի համեմատ։ Ուրեմն ուսումնական-մանկավարժական տեսակէտով կարելի է ընդունել որ գիւղատնտեսական ուսման մուտքը Ալէքսանդրապոլի առևտրական դպրոցում, ոչ մի խոչընդոտի չի հանդիպի, ի նկատի առած նոյն իսկ Ալէքսանդրապոլի կլիմայական—բնական պայմանները և աշակերտութեան ֆիզիքական—մտաւոր կարողութիւնը։ Միայն խնդիրը դեռ ևս քննելի է իւր նիւթական—տնտեսական կազմերով, որի տնտեսութիւնը արդարև ունի իւր լուրջ հիմունքները, իւր դրական կողմերը։

Ինչպէս յայտնի է, Ալէքսանդրապոլ քաղաքը արդէն ունի իր օրինակելի գիւղատնտեսական ագա-

բակը*), որի տարեկան մուտքը, քաղաքի 1910 թ. նախահաշվի համաձայն լինելու է 4160 ր. քաղաքային խորհուրդը արդէն վճռել է հրաւիրել մի յատուկ գիւրատնտես, քաղաքի հողային տնտեսութիւնը բարեկարգելու համար։ Քաղաքային ագարակը ունի իւր յատուկ սեփական շէնքը, բաւականաչափ գիւղատնտեսական գործիքներ, ընդարձակ ջրարբի հողաբաժին, որը կարելի է դեռ ևս ընդարձակել քաղաքապատկան կից հողերով։ Ուրեմն այդ տեսակէտով քաղաքը արդէն կիսով չափ ապահովել է գործի յաջողութիւնը. ճիշտ է որ գիւղատնտեսական ագարակի և գիւղատնտեսական մասնաժողովի գործը միացնել առևտրական դպրոցի և հոգաբարձութեան հետ, հրաւիրելով մի քանի այլ գիւղատնտեսներ—և կրճատել առևտրական դպրոցի աւելորդ եղած մի քանի ուսուցիչների ցուցակը։ Անշուշտ հարկաւորութիւն կայ այլ և այլ ծախսերի համար—բայց այդ բոլորը այնքան էլ ծանր ու անտանելի արգելառիթներ չեն, քանի որ ինքը գիւղատնտեսական դպրոցը աշխատանքի մի անվերջ աղբիւր է և կապված է կենդանի գործունէութեան հետ։ Ցիշենք նախ, որ քաղաքային ագարակը կամ ապագայ գիւղատնտեսական դպրոցը կարող է քաղաքին հասցնել անթիւ պտղատու ծառեր թէ վաճառելու համար և թէ անպտուղ ծառեր, քաղաքի փողոցները, ճեմելիքները զարդարելու համար, այդ արդէն մի օգտաւէտ գործ է։ Օրինակելի բանջարագործութիւնը, ծաղիկների մշակութիւնը, այգեգործութիւնը, մեղուաբուծութիւնը էլ կարող են մեծ շահ խոստանալ։ Երկրագործական գործիքների վաճառման գործը, եթէ կանոնաւորի դաւառի մէջ, կարող է նիւթական օգնութեան

*) Городской сельско-хозяйств. ферма

հասնել դպրոցին և խելացի տնտեսութեան շնորհիւ մի պատկառելի հասոյթ դառնալ դպրոցի գեղինը ապահովելու համար։ Եւ եթէ մասնաւոր անհատներ, ընկերութիւններ կարող են գիւղատնտեսութիւնից նիւթական շահ ստանալ, ինչու այդ բանը չի կարող անել ինքը, գիւղատնտեսական դպրոցը։

Մեր քաղաքում և գաւառում հետզհետէ տարածւում է այգեգործութիւնը և ամեն տարի ներմուծւում է մեր երկիրը մի քանի հազար ռուբլու պտղատու ծառեր, տունկեր և այլ տնային բոյսեր ու ծաղիկներ, այդ բոլորը ամենայն հեշտութեամբ կարող է անել գիւղատնտեսական դպրոցը և ապահովել իր մուտքերի մի մասը։

Բայց ամենակարևորը այն էր, որ անպատճառ պէտք է շատացնել մեր Առևտրական դպրոցի աշակերտների թիւը հասցնել գոնէ մինչև 700—800 հոգի, որպէսզի հնարաւոր լինի ապահովել դպրոցի հարստութիւնը և անկախութիւնը, այդ բանը կարելի է միմիայն գիւղատնտեսական ճիւղի ներմուծելով Առևտրական դպրոցում։ Աշակերտների թիւի շատութիւնը միայն կարող է իջեցնել ուսման վճարը մինչև յիսուն ռուբլի, այլապէս 300—400 աշակերտ ունեցող միջնակարգ դպրոցը, որից 10 տոկոսն էլ ազատ է ուսման վճարից, չի կարող ոչ թէ միայն ապահովել իր տնտեսական դրութիւնը, այլև չի կարող յարատևել, բարոյական հեղինակութիւն վաստակել թէ տեղական ժողովրդի և թէ մանաւանդ դրացի գաւառների մէջ։ Շիրակի գիւղացիութիւնը (200 գիւղեր) կարող է լիապէս աշակերտների թիւ տալու, ամեն գիւղից գոնէ մի աշակերտ ուղարկել գիւղատնտեսական դպրոցը. այլևս չենք խօսում մեր դրացի գաւառների այն է՝ Ախալքալակի, Ախալցխա-

յէ, Լոռիի, Ապարացի, Նոր-Բայազեթի, Սարմալիի, Իգդիրի և Ղարսի մասին որտեղի ժողովուրդը, մեծ անհրաժեշտութիւն ունի գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի և ամենայն սիրով կարող է աշակերտներ տալ Ալէքսանդրապոլին—քանի որ մեր երկրի կլիմայական, ազգաբնակչութեան և կենսական պայմանները յոյժ նպաստաւոր են այդ գաւառացիների համար։ Մեր առևտրական դպրոցի փառաւոր և ընդարձակ շէնքը, գիւղատնտեսական ագարակի ընդարձակ և նպաստաւոր պայմանները, ամեն կերպ յարմարաբար են պարունակելու իրենց մէջ 7—8 հարիւր աշակերտներից էլ աւելի, և ահա այդ դրսեցի աշակերտութիւնը կարող է նպաստաւոր հանդիսանալ քաղաքի տուր և առի ապահովութեան համար։ Այլևս չենք խօսում այն ահագին և անգին նիւթական և բարոյական շահաւէտութեան մասին, որ կարող է ունենալ մի միջնակարգ գիւղատնտեսական դպրոցը թէ մեր և թէ դրացի բոլոր գաւառի տնտեսական համերաշխութեան և թէ ժողովրդի նիւթական ապահովութեան մասին, այդ գործը համարելով ընդհանուր առաջադիմութեան և ապահովութեան գերագոյն հարց։

Կովկասի բարձրագոյն իշխանութիւնը արդէն ճանաչել է այդ էական խնդրի նշանակութիւնը և ամեն կերպ աշխատում է, որ շուտով բացւի Թիֆլիսի բարձրագոյն դպրոցը (политехникумъ) հանքային և երկրագործական բաժանմունքով։ Եւ գուցէ հեռու չէ նաև այն բախտաւոր օրը, երբ իսկական բարեգործ Ա.Թ. Ժամհարեանի կտակով բացւելու է Կովկասի գիւղատնտեսական համալսարանը։ Միւս կողմից Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն խնդիր է յարուցել և արդէն գործնական

ճանապարհի վրայ է մի քանի ստորին արդիւնաբերական դպրոցների բացման գործը, որից մի հատն էլ պէտք է բացւի Ալէքսանդրապոլում։ Քաղաքային խորհուրդը յարգեց իմ առաջարկութիւնը այն մասին, թէ ցանկալի է, որ Ալէքսանդրապոլում բացւի ոչ թէ ստորին, այլ միջնակարգ արդիւնաբերական դպրոց, քանի որ ստորին դպրոցները անզօր են օգնութեան հասնելու գաւառի տնտեսական փրկութեանը։ Ցանկալի է, որ այդ հարցը հարկաւորապէս ուշադրութեան առարկայ դառնայ և հաւանական է, որ կառավարութիւնը ինքը աւելի շուտ այդ ուղղութեամբ նպաստող հանդիսանայ մեր Առևտրական դպրոցը միջնակարգ գիւղատնտեսական դպրոցի վերածելու գործի մէջ։

Միւս կողմից Մոսկուայի հայոց եկեղեցական խորհուրդն էլ արդէն նշանակել է տարեկան հազար հինգ հարիւր ռուբլի նպաստ տեղիս Արղութեան դպրոցին կից գիւղատնտեսական դասընթաց հիմնելու համար։ Այլևս չենք խօսում պ. Մանթաշեանի մտադրութեան մասին, որը կամենում է մի քանի գիւղատնտեսական դպրոցներ բանալ Անդրկովկասում որից մէկն էլ գուցէ մեր գաւառին բաժին հասնի։ Այդպիսի մի գեղեցիկ միտք էլ պ. Մանդալեանն էր ունեցել։

Այդ բոլոր բարեյաջող հանգամանքները մեզ խոստանում և հաստատում են այն հաւատքի մէջ, թէ ժողովրդի տնտեսական բարեկեցութեան հարցը այդ գործին նպաստող գիւղատնտեսական դպրոցների գոյութեան խնդիրը արդարև յուրջ խորհրդակցութեան առարկայ է այժմ բոլոր բանիմաց անհատների և հաստատութիւնների մէջ։ Եւ սրանց պէտք է ցանկալ որ Ալէքսանդրապոլի հասարակութիւնն էլ

տնտարբեր չմնայ դէպի այդ լուրջ և կենսական հարցը և օգուտ քաղելով ամեն մի յարմար դէպքից, աշխատի իրականացնելու այս կամ այն ուղղութեամբ մի միջնակարգ գիւղատնտեսական դպրոց ունենալու խնդիրը կամ գիւղատնտեսական ճիւղ մտցնելու մեր Առևտրական դպրոցը, անշուշտ հարկաւորապէս կը շուռադատելով յարմարագոյն և օգտաւէտ ձևը և եղանակը։ Բայց պէտք է գործել և գործել այդ ուղղութեամբ։

Վերջացնելով մեր խօսքը, քաղցր մխիթարութեամբ յոյս ենք տածում, թէ Ալէքսանդրապոլի հասարակութիւնը, քաղաքային խորհուրդը, տեղական մամուլը և ձեռնհաս անհատներ ուշադրութեան արժանի պէտք է համարեն Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի բարեփոխութեան հարցը, որը անկասկած ունի էական նշանակութիւն մեր քաղաքի կրթական և տնտեսական խնդրի մէջ,—անաչառ քննադատութիւնը թող պարզէ այդ խնդրի դրական կամ բացասական կողմերը։

Վերջապէս պէտք է խոստովանենք և ճանաչենք որ Ալէքսանդրապոլում մի Առևտրական դպրոց բանալու հարցը դրուած է սխալ հաշիւների և անհաստատ հիմունքների վրայ, որովհետև մեր քաղաքը այժմ ոչ մի բնական տնտեսական և քաղաքական պատճառներ չունի վաճառաշահ կենտրոն լինելու։

Ուղղենք մեր սխալը և խոստովանենք, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը իր ներկայ ուղղութեամբ անհարազատ է տեղային կեանքին և հետևապէս անօգուտ։ Աշխատենք, որ անհրաժեշտօրէն հարկաւոր է մեր Առևտրական դպրոցը վերածել միջնակարգ գիւղատնտեսական դպրոցի կամ ներմուծել Առևտրական դպրոցում գիւղատնտեսական գիտու-

թիւնը, որպէսզի նա օգտաւէտ լինի քաղաքին և գաւառին։

Եթէ այդ ցանկալի բարեփոխութիւնը տեղի չունենայ, անշուշտ ցաւալի կողմը այն է լինելու, որ Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցը ծծելով տարեկան մօտ 60,000 ր. մեր աղքատ քաղաքից ու քաղաքացիներից, ի վերջոյ քամելու է տեղային ժողովրդի տնտեսական ոյժը, իսկ վերջինիս տկարութեան հետ ինքն էլ դադարելու է բնականապէս իր գոյութիւնից։

ՅԱՒԵԼԻԱԾ Ա.

Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի աշակերտների ցուցակը, որոնք ազատած են ուսման վճարից 1909—10 թ.

		Ռուբ.
1	Ալխազեան Սահակ	120
2	Խալաթեան Արտաւազդ	60
3	Խաժակեան Կարապետ	60
4	Տէր-Մկրտչեան Արտաւազդ	60
5	Զուեվ Վասիլիյ	60
6	Մարութեան Սիմէօն	80
7	Վօլկով Աղէքսանդր	80
8	Աթանասեան Սարգիս	100
9	Ղազանճեան Վարդան	100
10	Բալալկովսկիյ Սիգիսմունդ	100
11	Աֆրիկեան Գագիկ	100
12	Վարդանեան Աղասի	120
13	Տէր-Յակոբեան Յովհաննէս	120
14	Հայրապետեան Ռեթէոս	120
15	Ղարագարեան Լիւդվիգ	80
16	Խորէնեան Աղասի	120
17	Ափոյեան Թադէոս	120
18	Տօնականեանց Կարապետ	100
19	Վարդանեան Կարապետ	100
20	Զաղուլով Նիկողայոս	60
21	Զեռնեակով Վասիլիյ	30
22	Կոստանեան Լեւոն	120
23	Ղազարեան Անուշաւան	50
24	Յովհաննիսեան Գուգէն	50
25	Զանանեան Խաչատուր	100
26	Խաչվանքեան Տաճատ	50
27	Բարկովիչ Իսահակ	100

28	Այվազեան Ներսէս	100
29	Աղայեան Մկրտիչ	100
30	Աղապալեան Մատթէոս	100
31	Պապիկեանց Գրիգոր	100
32	Շչուկին Լէօնիդ	50
33	Հայրապետեան Կարապետ	50
34	Մարտիրոսեան Կարապետ	50
35	Անդրէասեան Գէորգ	80
36	Նահապետեան Գէորգ	40
37	Միքայէլեան Գրիգոր	40
38	Տէր-Յովսէփեան Յովսէփ	80
36	Արշակունի Արտաւազդ	80
40	Սարոյեան Գրիգոր	80
41	Ղազարեան Լեւոն	80
42	Մանուէլեան Սուրէն	100
43	Մանուէլեան Գէորգ	100
44	Կաչերկին	100
45	Վիլեամս	80
46	Սարգիսեան Արմէն	80
47	Տէր-Սահակեան	100
48	Թորոսեան Յարութիւն	120
49	Մանուկօղլեան Արամ	120
50	Հէքիմեան Հմայեակ	50
51	Խոյեցեան Յովսէփ	30

Գումարն է 4270*)

*) Ընթերցողի խորին ուշադրութեանն ենք յանձնում պարզելու այն հարցը, որ Առևտրական դպրոցի ձրիավարժ աշակերտների ծնողներից շատերը և ազգականները, որպէս այդ դպրոցում ծառայող ուսուցիչների, քաղաքային վարչութեան մէջ ծառայողների բարեկամներ, որպէս կալուածատէր և վաճառականներ, տարեկան հասոյթ ունեն միջին հաշուով 2—5 հազար ռուբլի։ Հոգաբարձութիւնը միայն կարող է պարզել, թէ ինչպէս այդ աղահով աշակերտները ընկել էր ձրիավարժների ցանկի մէջ, որոնցից շատերը որպէս օտար քաղաքացիներ, խլել են տեղացի աշակերտի իրաւունքը։

ՅԱՒԵԼԻԱԾ Բ.

Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի ուսուցիչների ռոճիկները և շաբաթական դասերի թիւը 1006—7 դպրոցական տարում։

	Շաբաթ. դաս	Ստաց. ռոճիկը	Ինչ առարկաներից է աւանդել
Վ. Ե. Բոմանովսկիյ	11	4025	Վերատես.
Պ. Գ. Իվանով	11	3450	Օգնական
Պ. Ի. Սմիրնով քահանայ	26	2050	Ռ. կրօն
Յ. Ս. Բուդաղեան	18	1350	Բուսաբան.
Գ. Հ. Հախումեան	12	1620	Ֆիզ. քիմ.
Ն. Ս. Տէր-Սահակեան	19	1825	Բն. աշխ.
Ս. Է. Տատոմիր	28	1950	Գծագր.
Ա. Գօսսս	3	2325	Գաղ. լեզի
Ա. Վ. Կաչերգին	21	2175	Ռուս. լեզ.
Մ. Պ, Տերեշչենկո	21	1570	Թուաբան.
Ա. Դ. Տէրտէրեան	25	2085	Ռուս. լեզ.
Լ. Գ. Մանուէլեան	24	2520	Ռուս. լեզ.
Ս. Գ. Տէր-Գրիգորեան	31	1750	Թուաբան.
Ներսէս քահ. Նիկողոսեան	26	1800	Հայոց կրօն
Է. Բ. Բերնսօն	28	2550	Գ. և ա. գիտ
Կ. Վ. Աբովեան	29	2175	Գերման.
Ն. Յ. Կիրակոսեան	30	2070	Հայոց լեզ.
Է. Կ. Պր. Ժուկովսկայա	12	900	Գաղիերէն
Ս. Ս. Իսահակեան	5	240	Հայոց լեզ.
Յ. Ն. Տէր-Մարտիրոսեան	2	300	Քաղ. տնտ.
Գ. Է. Բուրգովիչ	3	600	Երաժշտ.
Գումարը	306	38520	*)

*) Ներկայ 1910—1 թ. էլ այդ ծախսը նոյն է։

ՅԱՒԵԼԻԱԾ Գ.

Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի տարեկան հաշիւը 1911 թ. համար

Մուտք

Ուսման վճար աշակերտներից	37080	—
Պ. Բայենդուրեանի կտակից	1700	—
Քաղաքի կողմից օժանդակութիւն	7200	—
Գումարն է	45,980	—

Ելք

Վերատեսչի ռոճիկ (բացի բնակ. և լուս.)	3200	—
Օգնականին	2400	—
Ուսուցիչներին բոլոր դասարաններին	32660	—
Բժշկին	400	—
Գրադարանի կառավարչին	180	—
Երաժշտապետին	600	—
Հոգաբարձութեան գործավարին	120	—
Ուսուցչական խորհրդի քարտուղարին	120	—
Դպրոցի վարչութեան գործավարին	500	—
Հոգաբարձական խորհրդի հաշուապահին	300	—
Աւագ ծառայողին	360	—
Դռնապահին	240	—
Զորս կրտսեր ծառաներին	864	—
Քիմիական բաժնի ծառային	240	—
Զանազան տնտեսական ծախսեր	600	—
Ատենական ծախս	300	—

Ուսանողական գրադարանին . .	336	-
Հիմնական առարկաների . . .	200	—
Ֆիզիքական կաբինէտին . . .	1500	—
Բնագիտութեան և աշխարհ. առարկաներ	300	—
Ծառաների հագուստի . . .	100	—
Անյայտ ծախսեր . . - .	100	—
Ուսուցչական շրջագայութեան ծախսեր	300	—
Գումարն է	45,980	—

Այս հաշվի տակը պէտք է աւելացնել դպրոցի երկու յարկի շէնքի արժէքը, տարեկան եղած ծախսը տաքութեան, լուսաւորութեան և նորոգութեան համար, որը արժէ մօտ 14020 ր.։ Ուրեմն Առևտրական դպրոցի տարեկան ծախսը բարձրանում է մինչև 60 հազար ռուբլի։ Այդ հաշվի մէջ չէ դպրոցի դասական առարկաների համար բաց թողած գումարները քաղաքային սնդուկից, որի գումարը 10 տարուայ մէջ կարող է լինել մինչև 80 հազար ռուբլի։

Ցանկալի է, որ դպրոցի գոյքի հաշիւը հրատարակուած լինի գոնէ առաջիկայում։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

Անդրկովկասի Հայ-Կաթոլիկները ԺԹ. դարում (պատմական քննական ուսումնասիրութիւն և նիւթեր հայ եկեղեցական պատմութեան համար)։

Շիրակի գիւղատնտեսական և արդիւնաբերական վիճակը։

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0229883

51. 258